AZG NEW PDF.qxd 05/03/2010 22:42 Page 1

Azg Ազգ

4 ՄԱՐՏ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 38 (4419)

ISSN: 1829-1651

Գորբաչովն իրեն մեղավոր չի համարում Ղարաբաղի հարցում

Աշխարհում «ամենահարատև կայսրություններից» մեկի՝ ԽՍՀՄ-ի կազմի մեջ, հայտնի է, որ Ադրբեջանը մտել է առանց Ղարաբաղի, որը «նվիրել» է նրան Ստալինը հայտնի համաձայնագրով: Հետեւաբար կարելի է նկատել, որ ժամանակակից Ադրբեջանը, որն իրեն համարում է մուսաֆաթական Ադրբեջանի իրավահաջորդ, երբեք չի եղել Ղարաբաղի տերը, իսկ սովետական երկրի սահմանադրության համաձայն Սովետների երկրի մաս կազմող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը նույնքան իրավունք ուներ անկախության, որքան հենց Ադրբեջանը: Հետեւաբար Բաքվի կողմից շահարկվող տարածքային ամբողջականության սկզբունքը այնքան էլ չի վերաբերում Ղարաբաղին. որը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի մաս. արդեն գոյություն չունեցող ԽՍՀՄ-ի մաս՝ այո:

Տես էջ 2

Այսօր Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովում քվեարկության է դրվելու ցեղասպանության օրինագիծը

Նախագահ Բարաք Օբամայի վարչակարգը հազիվ թե միջամտի

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԵՏՆ

Այսօր ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քվեարկության կդրվի Հայոց ցեղասպանության ճանաչման թիվ 252 բանաձեւը: Թուրքիան ի սկզբանե փորձում էր կանխել բանաձեւի մուտքը հանձնաժողովի օրակարգ: Դա չհաջողվեց: Հիմա պայքարում է քվեարկությունը տապալելու համար, եթե դա նույնպես չհաջողվի, ապա այնպես անելու, որ բանաձեւն ընդունվի ձայների նվազագույն հարաբերակցությամբ:

Թուրքիայի արտգործնախարարությունը մինչ այդ ափսոսանք էր հայտնել հանձնաժողովի օրակարգում բանաձեւն ընդգրկելու առնչությամբ: Իսկ մարտի 1-ին, հանդես գալով հաղորդագրությամբ, բանաձեւը մերժելու կոչ արեց հանձնաժողովի անդամներին: Նույն օրը Վաշինգտոնում սկսեց կանխարգելիչ գործունեություն ծավալել թուրք պատգամավորների երկու պատվիրակություն: Առաջինը գլխավորում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության ներկայացուցիչ Մուրադ Մերջանը, երկրորդը՝ թուրք-ամերիկյան միջխորհրդարանական բարեկամության խմբի նախագահ Սուաթ Քընըքօղլուն:

Երեկ Վաշինգտոնում Մերջանը ելույթ է ունեցել ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնում եւ վերստին կրկնել է այն, ինչ ամերիկյան մամուլի ներկայացուցիչներին արդեն ասել էր. «ԱՄՆ Կոնգրեսում հայկական բանաձեւի քննարկումը կվնասի Թուրքիա-Հայաստան հարաբերությունների նորմալացման գործընթացին: Երբ երկու երկրների իշխանությունները արձանագրություններ են ստորագրում, ապա ընդհանուր հայտարարի են գալիս, որ 1915-ի իրադարձությունները դեռ պետք է ապացուցվեն պատմաբանների համատեղ հանձնաժողովում, եւ գործընթացը խցանված չէ, ես անձամբ դժվարանում եմ հասկանալ, թե ինչո՞ւ Կոնգրեսը ձեռնամուխ եղավ այս հարցի քննարկմանը»:

Տես էջ 3

Համայն Ռուսիո պատրիարքը կժամանի Հայաստան

Մարտի 2-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը գումարել է Գերագույն հոգեւոր խորհրդի նիստ, որի ընթացքում նշվել է, որ մարտի 16-18-ը կաթողիկոսի հրավերով Հայաստան կժամանի Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Առաջինը:

Մարտի 16-ին էջմիածնում կկատարվի պատրիարք Կիրիլի բարեգալաստյան արարողությունը, որից հետո էջմիածին եւ Սերգիեւ Պոսադ քաղաքների միջեւ քույր քաղաքներ կոչվելու համաձայնագիր կստորագրվի: Երկու եկեղեցիների առաջնորդները ծաղկեպսակ կդնեն Օշականի ճանապարհին գտնվող՝ 1826-28-ի ռուս-պարսկական պատերազմի ժամանակ զոհված ռուս զինվորների հուշակոթողին:



Մարտի 17-ին Կիրիլ Առաջինը կլինի Ծիծեռնակաբերդում եւ ծառ կտնկի «հիշողության» պուրակում: Նույն օրը Քանաքեռի Սուրբ Աստվածածին ռուսական եկեղեցում Գարեգին Երկրորդ կաթողիկոսն ու Ռուսիո պատրիարքը կհանդիպեն մեր երկրի ռուսական համայնքի ներկայացուցիչների հետ: Մարտի 17-ին երկու եկեղեցական առաջնորդներին կհյուրընկալի նախագահ Սերժ Սարգսյանը:

Տ. Ա.

Գագիկ Մինասյան. «Եթե Թուրքիան չգնա վավերացման, ցեղասպանության ճանաչման նոր ալիք կստանա»

ՀՀԿ խորհրդի անդամ, Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանին խնդրեցինք գազի սակագնի թանկացումը գնահատել՝ որպես տնտեսական ոլորտի էլաթիվ մասնագետներից մեկը, բայց հարցազրույցը չշրջանցեց նաեւ հայ-թուրքական եւ ղարաբաղյան թեմաները:

Գ.Մ-Գազի գնի թանկացումը, ցավոք, հիմնավորված է. ընդհանրապես ոլորտում կա վիճակագրություն՝ գազի գինը տարեկան թանկանում է միջինը 5 տոկոսով: Այս տարի դրան գումարվեց նաեւ դրամ-դոլար փոխարժեքի հետ կապված պրոբլեմը (նաեւ նախորդ տարվա մարտին մեր դրամն արժեզրկվեց, իսկ գազը մենք գնում ենք դոլարով, մինչդեռ գազի գինն անցյալ տարվա մարտից ցայսօր չէր թանկացել), եւ այն, որ մեր հայրենակիցների գազի սպառումը նվազել էր, նաեւ՝ նախորդ ժամանակաշրջանում ընկերության ներդրած գումարների վերադարձնելիության խնդիրը կար, այնպես որ այդ թանկացումն արդարացված էր: Խնդիրն ուրիշ տեղ է՝ որքանո՞վ են իշխանություններն իրականացնում այնպիսի քաղաքականություն, որ նման անխուսափելի իրավիճակներից պաշտպանված լինենք: Այս առումով մենք պետք է անդրադառնանք տարիներ շարունակ իրականացված քաղաքականությանը՝ մասնավորապես էներգետիկայի բնագավառում: Շուրջ երկու ամիս հետո կգործարկվի շաս բարձր օ.գ.գ ունեցող Երեւանի ՋԷԿ-ը, որ երկու անգամ ավելի շաս էլեկտրաէներգիա է արտադրում նույնչափ գազից: Եվ հենց այդ ՋԷԿ-ի գործարկման շնորհիվ գազի թանկացումը բոլորովին չի ազդելու էլեկտրաէներգիայի սակագնի վրա: Բացի այդ՝ մեր պարսիկ գործընկերների հետ սկսել ենք իրականացնել Մեղրիի ՀԷԿ-ի շինարարությունը, Դեբեդի վրա բավականին հզոր երկու էլեկտրակայանների շինարարությունն ենք սկսելու՝ այդ պարագայում մեր էլեկտրաէներգիայի արտադրությունը ձերբազատված կլինի ռիսկերից. այսինքն՝ կան քայլեր, որոնք իշխանություններն անում են, արդեն արել են եւ պետք է շարունակեն անել, որպեսզի ապագայում գազի գնի բարձրացումը բացասական ազդեցություն չունենա մասնավորապես էլեկտրաէներգիայի բնագավառում: Կոնկրետ այս թանկացումը մի քանի խնդիր է առաջացնում. նախ՝ մեր առավել աղքատ համաքաղաքացիների համար իշխանությունները պարտավոր են (եւ այդ մասին արդեն հայտարարել են) անել հնարավորը, որ գազի թանկացումն ավելի մեղմ անդրադառնա նրանց վրա:

Տես էջ 8

Հայաստանի երեք կուսակցություններ անդամակցելու համար դիմել են ԵԺԿ-ին

Մարտի երեքին նախագահ **Սերժ Սարգսյանը** ընդունել է Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահ **Վիլֆրիդ Մարթենսին**: Հանդիպման ընթացքում Մարտենսը նշել է, որ Հայաստանի երեք կուսակցություններ՝ Հանրապետականը, «Օրինաց երկիրը» եւ «Բարգավաճ Հայաստանը», դիմել են անդամակցելու: Այդ առիթով, Մարթենսի խոսքերով, Հայաստան կժամանի հատուկ պատվիրակություն, որը կուսումնասիրի կոալիցիոն կուսակցությունների հայտերը եւ կսկսի անդամակցության գործընթացը:

Անդրադառնալով Հայաստան-Եվրոմիություն հարաբերություններին՝ Սերժ Սարգսյանը նշել է, որ մեր երկրի համար «Արեւելյան գործընկերությունը» «հնարավորությունների պատուհան» է տարբեր ոլորտներում բարեփոխումներ կատարելու առումով: Մարթենսը ընդգծել է, որ Հայաստանը եվրոպական երկիր է եւ ընդգրկված է տարբեր համաեվրոպական կառույցներում:

Նախագահ Սարգսյանը Մարթենսին է ներկայացրել նաեւ տարածաշրջանային զարգացումների, Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման վերաբերյալ Երեւանի դիրքորոշումները:

Տ. Ա.

Տիմոշենկոն այլեւս վարչապետ չէ

Ուկրաինայի Գերագույն ռադան երեկ պաշտոնից ազատեց վարչապետ Յուլիա Տիմոշենկոյին: Նիստին ներկա 286 պատգամավորներից 243-ը կողմ են եղել Տիմոշենկոյի պաշտոնանկությանը: Միայն 10 պատգամավորներ են վստահություն հայտնել նախկին վարչապետին: Հատկանշական է, որ Տիմոշենկոյին դեմ քվեարկել են ոչ միայն նախագահ Յանուկովիչի գլխավորած՝ «Տարածաշրջանների կուսակցության», այլեւ մի շարք այլ կուսակցությունների ներկայացուցիչներ:

Գերմանիան ցեղասպանություն եզրից խուսափում է նահանջելով 2005-ի Բունդեսթագի բանաձեւից

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

«Դաշնային սեւ-դեղին նոր կառավարությունն էլ օսմանյան կայսրությունում հայերի 1915-16-ի կոտորածները ցեղասպանություն բառով չի աստիճանավորում, գրում է գերմանական «Դեր թագեսշպիգել» թերթը՝ մարտի 1-ի համարում հրատարակելով Մաթթիաս Մայսների «Կառավարությունը թաքնվում է պատմաբանների թիկունքում» հոդվածը: Հիշյալ հեղինակը, ում հրատարակությունների մասին իրազեկել ենք մեր թերթի ընթերցողներին, այն սակավաթիվ լրագրողներից է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ շարունակական, հետեւողական աշխատանք է իրականացնում: Այս վերջին հոդվածում հեղինակը տեղեկացնում է, թե Բունդեսթագի ձախ խմբակցության հարցմանն ի պատասխան արտգործնախարարության պետնախարար **Կորնելիա Փիփերը** (Ազատ դեմոկրատական կուսակցություն) գրավոր պատասխանել է, թե կառավարությունը ողջունում է «ողբերգական իրադարձությունների» հետագա հետազոտումը՝ արժեւորումը վերապահելով «անկախ պատմաբաններին»: Վերանայումը «առաջին հերթին երկու երկրների՝ Թուրքիայի եւ Հայաստանի խնդիրն է»: Գիտնականների տվյալներով, երիտթուրքերի տիրապետության ժամանակ 1,5 միլիոն հայ է մահացել:

Հինգ տարի առաջ կարմիր-կանաչ կոալիցիոն կառավարության տարիներին Բունդեսթագն իր ափսոսանքն էր հայտնել, միաձայն ընդունել «հայերի կազմակերպված տեղահանման ու ոչնչացման» բանաձեւը: Ձախ քաղաքական գործիչ Կատրին Վերները, որ նախաձեռնել էր հարցադրումը, քննադատել է կառավարության պատասխանը՝ այն որակելով «փախուստ քաղաքական պատասխանատվությունից»: Այս հրաժարումով կառավարությունը նույնիսկ Բունդեսթագի երբեմնի որոշումից է հետ գնում, հայերի ողբերգական ճակատագիրը որպես պատմական ճշմարտություն ընդունելու փոխարեն: Դաշնային կառավարության կեցվածքը «վկայում է պատմությունը մոռանալու եւ քաղաքական անպատասխանատվության մասին», ասել է Վերները, որը պառլամենտի մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ է:

Տես էջ 3

ԵՄ-ից Թուրքիային՝ 6 մլրդ եվրո

Լյուքսեմբուրգում Եվրոպական աուդիտորների այցանի օրերս հրապարակած 54 էջանոց տեղեկագիրը բացահայտում է, որ սկսած 2002 թվականից Եվրոմիությունը Թուրքիային է տալիս եւ շարունակելու է մինչեւ 2013 թվականը տալ ավելի քան 6 մլրդ եվրո՝ որպես օգնություն «Եվրոմիություն ընդունվելու համար», Փարիզից հաղորդում է ազատ լրագրող **Ժան Էսքիյանը**:

AZG NEW PDF.qxd 05/03/2010 22:44 Page 1

Ոչ հեռավոր ապագայում սպասվում է ծնելիության մակարդակի անկում

Վերջին 3-4 տարիներին Հայաստանում արձանագրվել է ծնելիության մակարդակի որոշակի աճ: 2009 թվականին հանրապետությունում յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով ծնվել է շուրջ 14 երեխա, այնինչ 2001-2002 թվականներին 1000 բնակչի հաշվով եղել է ընդամենը 10 ծնունդ:

«Ըստ նախնական տվյալների՝ 2009-ին ունեցել ենք 44466 կենդանի ծննդյան դեպք, որը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է շուրջ 8%-ով, 2008-ին եղել է 41185 կենդանի ծնունդ», երեկ «Հայելի» ակումբում՝ ասուլիսի ժամանակ ասաց ազգային վիճակագրական ծառայության ժողովրդագրության բաժնի պետ **Կարինե Կույումջյանը**:

ԱՊՀ այլ երկրների համեմատությամբ՝ հայաստանյան ցուցանիշները բարվոք են: Վրաստանում 2009-ին 1000 բնակչի հաշվով ծնվել է 13 երեխա Ղազախստանում՝ 21, Ղրղզստանում՝ շուրջ 25, Մոլդովայում՝ 12, Ռուսաստանում՝ շուրջ 12, Տաջիկստանում՝ 31: Աշխարհում ծնելիության բարձր ցուցանիշներ ունեն հատկապես արաբական եւ աֆրիկյան երկրները, Հնդկաստանը, Պակիստանը եւ ընդհանրապես ամբողջ մուսուլմանական աշխարհը:

«Եթե անգամ կա ծնելիության ինտենսիվության աճ, ապա միայն մասամբ՝ մոտավորապես 30-40%-ով: Ծնելիության աճը հիմնականում պայմանավորված է նրանով, որ արդեն մի քանի տարի վերարտադրական տարիք է մտել 1980-ականներին ծնված բազմամարդ սերունդը, ասաց ասուլիսի մյուս բանախոսը՝ ժողովրդագիր **Ռուբեն Եգանյանը**, 80-ականներին տարեկան ունեցել ենք շուրջ 75 հազար ծնունդ, անգամ 1985 եւ1986 թվականներին գերազանցել ենք 80 հազարի սահմանագիծը»:

Ռուբեն Եգանյանը կանխատեսում է, որ հետագայում ունենալու ենք ծնելիության անկում, քանի որ 1990-ականներին տարեկան արձանագրվել է ընդամենը 30-32 հազար ծնունդ: Հիմա տարեկան ծնվում է 40-44 հազար երեխա, բայց երբ վերարտադրական տարիք մտնի 90-ականներին ծնված սերունդը, ապա ծնելիության ցուցանիշը 2 անգամ կնվազի: Որպեսզի ծնելիության մակարդակի անկում չլինի, 90-ականներին ծնվածները պետք է ունենան 2 անգամ ավելի շատ երեխաներ, քան ունենում է այսօրվա վերարտադրող սերունդը: Ծնելիության մակարդակի բարձրացմանը կօգնի նաեւ սոցիալական գործոնի բարելավումը:

«**Ազգի**» հարցին՝ ծնելիության մակարդակի վրա ինչքանո՞վ է շարունակում ազդել միգրացիոն արտահոսքը, Ռուբեն Եգանյանը պատասխանեց. «Միգրացիոն արտահոսքի հետեւանքով, իհարկե, սերնդի նվազում եղավ, մանավանդ որ միգրացվողների հիմնական մասն ակտիվ վերարտադրական տարիքի մարդիկ էին, ընդ որում՝ տղամարդիկ: Կանանց թիվը սկսեց գերակշռել, իսկ տղամարդկանցը՝ պակասել, որը խանգարեց բնականոն ամուսնական գործընթացներին ու բերեց ծնելիության նվազման: Հիմա էլ միգրացիոն արտահոսքը շարունակում է ազդել ծնելիության մակարդակի վրա»:

Հայաստանում նույնիսկ ամենածանր տարիներին ծնվածների թիվը եղել է ավելի շատ, քան մահացածներինը, բայց մոտենում է այն ժամանակը, երբ ավելի բարձր է լինելու մահացողների թիվը:

«Բնակչության բնական հավելաքը ձեւավորվում է ծնվածների ու մահացածների տարբերությամբ: 2009-ի ընթացքում հանրապետությունում բնական հավելաքը կազմել է 16938 մարդ», ասաց Կարինե Կույումջյանը:

Ըստ նախնական ցուցանիշների՝ 2009-ին եղել է 27528 մահվան դեպք, 1000 բնակչի հաշվով՝ շուրջ 8 մարդ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Ալեքսանդր Նոզդրաչովին

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը մարտի 3-ին ընդունել է ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի գործարար խորհրդի նախագահ, Ռուսաստանի Դաշնության զինագործների միության փոխնախագահ Ալեքսանդր Նոզդրաչովի գլխավորած պատվիրակությանը:

Քննարկվել են Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանը վերաբերող հարցեր, ինչպես նաեւ՝ ՀԱՊԿ շրջանակում ռազմատեխնիկական համագործակցության հեռանկարները:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԱՄՈՒԼԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ

Ամենափակ ոլորտը հայ լրագրողի համար ոստիկանությունն է

«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպությունն ու ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը համատեղ երեկ «Ուրբաթ» մամուլի ակումբում ներկայացրին «Լրագրողների եւ լրատվամիջոցների նկատմամբ բռնությունները, ճնշումները եւ դատական գործերը Հայաստանում 2008-09-ին» գիրքը: Գրքում տեղ են գտել նշված ժամանակահատվածում Հայաստանում տեղի ունեցած՝ լրագրողների նկատմամբ բոլոր բռնություններն ու դրանց վերլուծությունները, ինչպես նաեւ տարբեր դատարաններում լրագրողների դեմ բացված զրպարտության մեղադրանքով դատական գործերը: Ըստ գրքի խմբագիր, «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի անդամ **Լիանա Սայադյանի՝ մեր երկրում, ի տարբերություն ամբողջ աշխարհի, որտեղ անցյալ տարի 76 լրագրող է սպանվել, նման դեպքեր չկան: «Փոխարենը Հայաստանում շատ են լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների դեպքերը, որոնք աճի միտումներ ունեն», նկատեց Լիանան: Իսկ որ ոստիկանության ներկայացուցիչները տարբեր առիթներով հայտարարում են, թե լրագրողների դեմ բռնությունները «դժվար բացահայտվող հանցագործություններից» են, ըստ Լիանա Սայադյանի՝ չեն համապատասխանում իրականությանը. «Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ գործերի առնչությամբ հաճախ նույնիսկ քրեական գործեր չեն բացվում», նշեց Լիանան: ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ներկայացուցիչը նույնպես նկատեց, որ Հայաստանում լրագրողների դեմ բռնությունների մեծամասնությունը բացահայտված չէ: Առհասարակ մեր երկրում ոստիկանությունը, Լիանա Սայադյանի խոսքերով, ամենափակ ոլորտն է լրագրողի համար. «Օրինակ՝ դատախազության հետ ավելի հեշտ է աշխատել, քան ոստիկանության», ասաց Սայադյանը:**

Անդրադառնալով լրագրողների դեմ դատարաններում սկսված դատական գործերի քննությանը՝ Լիանա Սայադյանը նկատեց, որ դրանք հիմնականում վերաբերում են զրպարտությանը: Իսկ լրագրողին ներկայացված նման մեղադրանքը ե՛ւ Սայադյանի, ե՛ւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ներկայացուցչի խոսքերով, պետք է ապաքրեականացվի. «ՁԼՄ-ները պետք է ինքնակառավարվեն, սա շատ հարցերի լուծման լավագույն տարբերակն է», ընդգծեցին բանախոսները: Լիանա Սայադյանի կարծիքով, սակայն, կոնկրետ զրպարտության դեպքում, եթե այն ապաքրեականացվի, կարող են ՁԼՄ-ների համար առաջանալ տնտեսաֆինանսական խնդիրներ. «Հատկապես հայկական տպագիր մամուլի վիճակն այնպիսին է, որ դժվար թե դիմանան այդ պահանջներին, հետեւաբար կա վտանգ, որ լրատվամիջոցները կարող են կիրառել ուժեղ ինքնագրաքննություն», նկատեց Լիանան:

Իսկ այն հարցին, թե արդյոք մեղավոր չէ՞ հենց լրագրողն ինքը, երբ հրահրում է սեփական անձի նկատմամբ բռնություն, Լիանա Սայադյանը պատասխանեց, որ ամեն դեպքում չի կարելի թույլ տալ լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառումը:

Վերջում երկու բանախոսներն էլ եւս մեկ անգամ կարեւորեցին ՁԼՄ-ների եւ առանձին լրագրողների ինքնակառավարման անցնելու անհրաժեշտությունը. «Լրագրողները, լավ կլինի՝ ավելի փաստարկված գրեն նյութերը, ավելի հիմնավորված», եզրափակեց Լիանա Սայադյանը:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Հ.Գ.- Ի դեպ, լրագրողների նկատմամբ բռնությունների թեման հայկական հեռուստաընկերություններից հետաքրքրել էր միայն «ԱՐ»-ին եւ «Երկիր-Մեդիային», երեւի ոչ հեռուստատեսային լրագրողներն ավելի շա՞տ են ենթարկվում բռնությունների:

Գագիկ Ծառուկյանն ընդունել է Վիլֆրիդ Մարթենսին

Երեկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանն ընդունել է Եվրոպական Ժողովրդական կուսակցության նախագահ Վիլֆրիդ Մարթենսի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել Գագիկ Ծառուկյանի եւ Վ. Մարթենսի առանձնազրույցը, կողմերը մտքեր են փոխանակել միջկուսակցական կապերի եւ հարաբերությունների խորացման, հետագա համագործակցության հեռանկարների շուրջը: Երկու նախագահների առանձնազրույցի ընթացքում ԵԺԿ նախագահը ընդգծել է ԲՀԿ առաջնորդի դերը եվրոպական արժեքների տարածման ու հաստատման գործում եւ վստահություն հայտնել, որ իրենց համագործակցությունը լուրջ հեռանկարներ է ունենալու: ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը կարեւորել է Հայաստանի եվրոինտեգրման գործընթացը, նշելով այդ ճանապարհին կատարված աշխատանքն ու այն խնդիրները, որոնք Հայաստան-ԵՄ հարաբերությունների օրակարգում են:

ՀՀ ԱԺ ոսկեզօծ դահլիճում Վ. Մարթենսը հանդիպել է նաեւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցության եւ Երեւան քաղաքի ԲՀԿ ավագանու անդամների հետ: ԵԺԿ նախագահը կարեւորել է եվրոպական միասնական քաղաքականության մեջ ինտեգրվելու «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հաստատակամությունը, հույս հայտնելով, որ ընթացիկ տարում ԵԺԿ-ն կընդունի որոշում՝ «Բարգավաճ Հայաստանին» դիտորդի կարգավիճակ տրամադրելու հարցում: Իր հերթին Գագիկ Ծառուկյանը նշել է, որ երկու կուսակցություններին միավորում են ինչպես գաղափարական, այնպես էլ արժեքային ընդհանրությունները, որոնք այսուհետեւ կհամալրվեն նաեւ կուսակցությունների ղեկավարների միջեւ հաստատված անձնական շփումներով եւ գործընկերային հարաբերություններով: «Ես հավատում եմ եվրոպական մեր հաջողությանը», ԵԺԿ նախագահի հետ հանդիպումն ամփոփելով ասել է ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը:

Բաղդասարյան-Մարթենս հանդիպում

<<Օրինաց Երկիր >> կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանն այսօր կուսակցության գրասենյակում ընդունեց Եվրոպական Ժողովրդական կուսակցության նախագահ Վիլֆրիդ Մարթենսի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել միջկուսակցական հարաբերությունների զարգացման եւ հետագա համագործակցության հեռանկարների շուրջ: Կարեւորելով եվրոպական միասնական քաղաքականությանը ինտեգրվելու ՕԵԿ-ի հաստատակամությունը, ինչպես նաեւ տարածաշրջանային երկրների եւ Եվրամիության անդամ պետությունների միջեւ քաղաքական ակտիվ երկխոսության անհրաժեշտությունը, Արթուր Բաղդասարյանը նշեց, որ քաղաքական այս երկու կուսակցություններին միավորում է թե գաղափարական, եւ թե ժողովրդավարական սկզբունքների վրա խարսխված արժեքային ընդհանրությունը: ՕԵԿ նախագահը խոսեց նաեւ հայ-թուրքական հարաբերությունների, ինչպես նաեւ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանն առնչվող հարցերի շուրջ:

Նշվեց նաեւ, որ <<Օրինաց Երկիր >> կուսակցությունը Քրիստոնեա- Դեմոկրատական Ինտերնացիոնալի անդամ է եւ որդեգրել է Եվրամիության արժեքային համակարգին համահունչ բարեփոխումների քաղաքականություն:

ՕԵԿ մամուլի ծառայություն

Գորբաչովն իրեն մեղավոր ...

1-ին էջից

Այս առումով հետաքրքրական է ԽՍՀՄ առաջին ու վերջին նախագահի՝ **Միխայիլ Գորբաչովի** հարցազրույցը ռուսական «Կոմերսանտ» թերթին: Գորբաչովը Ղարաբաղի հարցն անվանել է «անչափ հին ու անչափ բարդ»: Իսկ հետաքրքրական է, որո՞նք էին «հետքության այն հիմքերը», որոնցով որոշվեցին Կոսովոյի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ճակատագրերը: Ինչեւէ, Գորբաչովը նաեւ արդարացել է, նշելով, որ ինքն ամենեւին էլ մեղավոր չէ հայ-ադրբեջանական հակամարտության մեջ. «Հայաստանն ու Ադրբեջանը ինձ հաճախ են մեղադրում կողմերից մեկին պաշտպանած լինելու մեջ, սակայն դա այդպես չի եղել», ընդգծել է Միխայիլ Գորբաչովը՝ հավելելով. «Այժմ ես չգիտեմ, թե ինչ կարելի է Ղարաբաղում անել: Հեղափոխության ժամանակ որոշվել են երկրների արտաքին ու ներքին սահմանները: Ընդ որում որոշվել են այնպես, որ հարեւան սովետական երկրները կախման մեջ լինեն իրարից, որ մշտապես հնարավորություն լինի հակամարտություն «սարքելու», իսկ Մոսկվային՝ նշանակելու այդ հակամարտության «դատավոր»: Այսպիսով որոշվում էր սովետական երկրի ուժի կենտրոնը: Իսկ կոնկրետ Ղարաբաղում խնդիրներ առաջացել են ե՛ւ պատերազմից առաջ, ե՛ւ դրանից հետո», հայտարարել է Գորբաչովը: Սովետական երկրներն «իրարից կախման մեջ պահելու սկզբունքով» սահմաններ գծելու սովետական սովորությունը, որը խոստովանել է Գորբաչովը, արդյո՞ք չի՞ ապացուցում, որ հենց միայն դրա համար էլ Ղարաբաղը տրվել է Ադրբեջանին, ինչպես ԽՍՀՄ նախագահն է ասում՝ հակամարտություններ «սարքելու» հնարավորության համար:

Վերջում Գորբաչովը նշել է, որ նման խնդիրները չի կարելի լուծել ազգային հողի վրա. «Չի կարելի թույլ տալ, որ կողմերից մեկը լինի հաղթող, մյուսը՝ պարտվող. դա չէ հարցի լուծումը: Կողմերը պետք է գտնեն կոնսենսուս: Այ, երբ ամբողջ Եվրոպան կմիավորվի, այդ ժամանակ էլ հետաքրքիր կլինի այս հարցին լուծում տալ», եզրափակել է Գորբաչովը:

ԽՍՀՄ նախկին նախագահը երեւի չգիտի, որ այսօրվա միավորված Եվրոպայում անգամ շատ հարցեր լուծվում են ազգային հողի վրա, որ նույն Եվրոպայի մաս կազմող Իսպանիայի ներսում կատալոնացիներն ու բասկերը, օրինակ, անկախության են ձգտում, որ նույն միավորված Եվրոպան արագ եւ հետաքրքիր լուծում տվեց Կոսովոյի խնդրին: Իսկ Ղարաբաղը, որը բոլոր իրավունքներն ունի անկախ պարելու, որը վաստակել է այդ իրավունքը, որին երբեք չեն կարող վերաբերել Ադրբեջանի տարածքային ամբողջականության պնդումները՝ ազատ ինքնորոշվելու իրավունք չունի՞:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

AZG NEW PDF.qxd 05/03/2010 22:43 Page 1

«Արդյոք եղե՞լ է հայկական եղեռն»

Հարցին Մեծ Բրիտանիայի թագուհու խորհրդականը դրական պատասխան է տվել

Անցյալ տարվա վերջին Մեծ Բրիտանիայում գործող Հայկական կենտրոնը նախաձեռնել էր ակցիա եւ հարցման ձեւով պատվիրել Մեծ Բրիտանիայի թագուհու խորհրդականին՝ Ջեֆրի Ռոբերտսոնին, Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի եւ Մեծ Բրիտանիայի քաղաքական ուղեգծի մասին տեսակետ ներկայացնել: Ռոբերտսոնի ընտրությունը պատահական չէր: Նա մարդու իրավունքների եւ ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ է եւ ոչ միայն Անգլիայում, այլեւ Եվրոպայում համարվում է ոլորտի լավագույն մասնագետներից մեկը:

«Եվրոպական ինտեգրացիա» կազմակերպության նախագահ **Կարեն Բեֆարյանը** նկատում է, որ Ռոբերտսոնի կարծիքը շատ ավելի մեծ ազդեցություն կարող է թողնել, քան որեւէ այլ մասնագետի կամ կազմակերպության:

Ռոբերտսոնի՝ «Արդյոք եղե՞լ է հայկական եղեռն» զեկույցի անգլերեն տարբերակի շնորհանդեսը տեղի էր ունեցել նախորդ տարի Լոնդոնում:

Զեկույցի հայերեն տարբերակն արդեն պատրաստ է: Էլեկտրոնային տարբերակով գրքի շնորհանդեսը կայացավ երեկ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտում: 65-70 էջանոց աշխատությունը չափազանց կարեւոր է հատկապես իրավական տեսանկյունից: Ռոբերտսոնն իր զեկույցում անդրադարձել է Հայոց ցեղասպանության նախապատմությանը՝ հղում կատարելով

հենց բրիտանական փաստաթղթերին: Նա խնդիր է բարձրացնում, որ խախտվել են մարդկանց իրավունքները, տնտեսական նպատակահարմարությունից ելնելով Բրիտանիայի այդ ժամանակվա իշխանությունները սխալ, ապակողմնորոշող տեղեկատվություն են տրամադրել հասարակությանը:

Բրիտանացի քաղաքական գործիչներն անդադար հայտարարում էին, որ որեւէ փաստաթուղթ չկա, որն ապացուցում է թուրքական նպատակադրվածությունը՝ իրականացնել հայերի հանդեպ ցեղասպանությունը, մինչդեռ Ռոբերտսոնը հերքում է այդ կարծիքն ու ներկայացնում իր փաստերը:

«Յուրաքանչյուր երկրի հիշողության մեջ կա Հայոց ցեղասպանության փաստը: Թեմայի քննարկումը առաջնահերթ հարգանք է յուրաքանչյուր երկրի ժողովրդի ու պատմության առաջ: Հայոց ցեղասպանությունը եվրոպական հիշողության մաս է կազմում՝ քաղաքական եւ բարոյական բաղադրիչներով: Շարքային քաղաքացին՝ ապրի Անգլիայում թե ԱՄՆ-ում, պետք է իմանա, թե իր նախնիները ինչպիսի մարդասիրական քայլ են կատարել ու օգնել հայ փախստականներին», նկատում է Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանը**:

Դեմոյանի կարծիքով՝ վերջին շրջանում Մեծ Բրիտանիայում նկատվող աճխուժությունը Հայոց ցեղասպանության փաստի առնչությամբ մեծապես կապված է հենց այս աշխատության հետ:

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կրթաթոշակ արտասահմանցի ուսանողներին՝ մասնագիտանալու Հայոց ցեղասպանության հարցում

Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի կապակցությամբ Հայոց ցեղասպանություն թանգարան-ինստիտուտը նախաձեռնել է մի շարք գիտական միջոցառումներ, ցուցադրություններ, կոնֆերանսներ: Մշտական ցուցադրությունից բացի, թանգարան-ինստիտուտը սփյուռքի նախարարության հետ համատեղ կկազմակերպի երկօրյա կոնֆերանս՝ մշակութային ցեղասպանություն թեմայով: Ապրիլի 23-ին թանգարանի սրահում կբացվի բացառիկ ցուցադրությունը, որտեղ տեղ են գտել թանգարանի գիտաշխատողների վերջին 2 տարվա հավաքական աշխատանքների արդյունքները: Թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը նկատում է, որ ցուցանմուշները ցուցադրվում են առաջին անգամ ու ներկայացնում փաստերի հսկայական հավաքածու:

Թանգարան-ինստիտուտի խոշոր նախագծերից մեկը կառույցի ընդարձակումն է, որտեղ կլինի նաեւ նոր ու ավելի լայնածավալ ցուցադրություն: Ժամանակավոր ցուցադրությունների սրահում կներկայացվեն Հայոց ցեղասպանության մասին արտասահմանյան հեղինակավոր մամուլում տեղ գտած 40-50 բացառիկ հոդվածներ: «Այս ցուցադրությունը կփաստի, որ Հայոց ցեղասպանությունը միշտ էլ գտնվել է արտասահմանյան հեղինակավոր մամուլի ու վերլուծաբանների ուշադրության կենտրոնում», ասաց Դեմոյանը:

Թանգարան-ինստիտուտը հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված եւս մեկ կարեւոր գործ է նախաձեռնել: Կհատկացվեն դրամաշնորհներ այն արտասահմանցի ուսանողներին, ովքեր ցանկանում են մասնագիտանալ Հայոց ցեղասպանության հարցում: Կրթաթոշակը կկրի Ռաֆայել Լեմկինի անունը, հենց նրա, ով ինքնելով 1915-ին Օսմանյան կայսրությունում կատարված վայրագություններն ու ջարդերը, առաջին անգամ արտաբերեց «Հայոց ցեղասպանություն» եզրույթը:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ժամկետային ավանդների ծավալով առաջատարի դիրքը

«Յունիբանկի» նկատմամբ բնակչության վստահության լավագույն ապացույցն է

«Յունիբանկի» ժամկետային ավանդների ծավալը վերջին տարում աճել է 100,8 տոկոսով եւ 2009-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել ավելի քան 73 մլրդ 150,6 մլն դրամ: Հայաստանյան բանկերի շարքում այս ցուցանիշով «Յունիբանկը» զբաղեցրել է առաջին տեղը: Ժամկետային ավանդների ակտիվ աճը պայմանավորված է ավանդատուների վստահության շարունակական աճով, ինչպես նաեւ բանկի ավանդների գրավիչ պայմաններով, որոնք հաշվարկված են՝ ելնելով հաճախորդների տարբեր տեսակի պահանջներից:

Այս տարի «Յունիբանկը» հայտարարեց շահավետ պայմաններով ներգրավվող երեք նոր ավանդատեսակների մասին: Ավանդները առանձնանում են բազմարժութային ռեժիմով, կապիտալիզացիայի եւ լրացուցիչ նվերներ շահելու հնարավորություններով: Օրինակ, «Հաղթենք միասին» ավանդը ներդնող հաճախորդների միջեւ ամռանը կկայանա Արթուր Աբրահամի մենամարտի հրավիրատոմսերի խաղարկություն: Դեպի Գերմանիա ուղեւորության հետ կապված բոլոր ծախսերը կհոգա «Յունիբանկը»: «Հաղթենք միասին» ավանդն ընդունվում է մինչեւ 11,5 տոկոս տարեկան տոկոսադրույքով եւ 300 հազար նվազագույն գումարով:

«Կապիտալ+» ավանդը հաճախորդներին ընձեռում է տոկոսագումարի կապիտալիզացիայի հնարավորություն մայր գումարին: Ավանդն ընդունվում է 31-ից մինչեւ 365 օր ժամկետով, իսկ տարեկան տոկոսադրույքը կազմում է մինչեւ 8,5 տոկոս: Ավանդի նվազագույն գումարը սահմանված է ընդամենը 30 հազար ՀՀ դրամ:

«Բազմարժութային» ավանդի գործողության ողջ ժամկետում գործում է բազմարժութային ռեժիմ, այսինքն՝ ավանդատուներին տրվում է ավանդի արժույթի փոխարկման հնարավորություն: Ավանդի տարեկան տոկոսադրույքը կազմում է մինչեւ 9%, նվազագույն գումարը՝ 100 հազար դրամ:

«Յունիբանկի» ավանդատեսակների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ զանգահարելով բանկի թեժ հեռախոսակապի կենտրոն՝ 85-80 հեռախոսահամարով, կամ այցելելով բանկի կայքէջի (www.unibank.am) «Ավանդներ» բաժինը:

Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովում ...

1-ին էջից

Պատվիրակության մեկ այլ ներկայացուցիչ, Շուքրյու Էլեոդաղը, որ նախկին դեսպան է եւ Մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ներկայացնում է Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, հավելել է Մերջանին: Նա ընդգծել է, որ նախագահ Բարաք Օբաման, ի տարբերություն նախորդների, չի միջամտում բանաձեւին եւ ոչ մի քայլ չի գործադրում դրա ընդունումը կանխելու համար: Ապա եւ ավելացրել է. «Այս գործելակերպն ունի մեկ պատճառ, այն է՝ ապահովել արձանագրությունների վավերացումը թուրքական խորհրդարանում»: Ապա Էլեոդաղն ասել է, որ Թուրքիան չի բացի Հայաստանի հետ սահմանը, քանի դեռ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումներին համապատասխան չի կարգավորվել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

Ինչ վերաբերում է թուրք պատգամավորների երկրորդ պատվիրակության ղեկավար Քընըֆօղլուին, ապա նա էլ պատասխանել է Նյու Յորքի «Թուրքական կայքէջի» հարցերին, մասնավորապես նշելով. «Եթե այս օրինագիծը հաստատվի Կոնգրեսում, ապա ստիպված ենք լինելու ընդունել, որ Միացյալ Նահանգներն այլեւս գերտերություն չէ, որովհետեւ Ամերիկան հայտնվում է փոքրաթիվ սփյուռքահայության ամենաանշան խնդրին տուրք տվողի դերում»: «Չէ՞ որ այս տարի ԱՄՆ-ի հրեական լոբբին օրինագծի առնչությամբ չի պաշտպանում Թուրքիային» հարցին ի պատասխան, նա ասել է. «Մենք մեր հաշվարկները չենք արել հրեական լոբբիի աջակցության ակնկալիքով»:

Ի դեպ, թուրքական երկու պատվիրակություններն էլ ներկա կլինեն Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի մարտի 4-ի նիստին՝ հետեւելու բանաձեւի քվեարկության ընթացքին: Հարցը, սակայն, պատվիրակությունների ներկայությունը չէ, այլ հիասթափությունը: Այլապես Մերջանը համատեղ հանձնաժողովում 1915-ի իրադարձությունները ուսումնասիրելու շուրջը կողմերի ընդհանուր հայտարարի գալու մասին հրապարակավ չէր ասի, Հայոց ցեղասպանության բանաձեւի քվեարկության նախօրյակին Էլեոդաղը Թուրքիայի հայկական սահմանի բացումը չէր պայմանավորի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումով, ոչ էլ Քընըֆօղլուն կփորձեր կոնգրեսականների զգացմունքների վրա խաղալ, թե օրինագծի ընդունման դեպքում ԱՄՆ-ն այլեւս գերտերություն չի համարվի, որովհետեւ տուրք է տալիս սփյուռքահայությանը:

Թուրքական պատվիրակությունների հիասթափությունը, ըստ երեւույթին, պայմանավորված է Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանի, Ազգային անվտանգության խորհրդի խոսնակ Մայք Համմերի, Թուրքիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Նորթոն Աբրամովիցի հայտարարություններով, ինչպես նաեւ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի «Լոս Անջելես թայմսում» հրապարակված հոդվածով եւ հատկապես 1915-ի իրադարձությունների նկատմամբ նախագահ Օբամայի եւ նրա թիմակիցների որդեգրած դիրքորոշումով: Այն առումով, որ Թուրքիան մինչ այդ Վաշինգտոնի վարչակարգի միջամտությամբ էր կանխում ցեղասպանության բանաձեւերի ընդունումը Կոնգրեսում:

Նախագահ Օբաման 1915-ի իրադարձությունները որակել է ցեղասպանություն, ավելին, այդ նույն դիրքորոշումը վերահաստատել է Անկարայում Թուրքիայի նախագահի ներկայությամբ, իսկ Թուրքիայի ազգային մեծ ժողովում սեփական պատմության հետ առերեսվելու կոչ է արել պատգամավորներին: ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը ոչ միայն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, այլեւ ճանաչման բանաձեւերի նախաձեռնողներից է: Իսկ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը նույնպես ցեղասպանության ճանաչման օգտին է արտահայտվել:

Սա նշանակում է, որ մարտի 4-ին Սպիտակ տունն ու պետքարտուղարությունը չեն միջամտի հանձնաժողովում ցեղասպանության օրինագծի քվեարկությանը, մանավանդ խոսնակ Համմերի հայտարարությունից հետո. «Նախագահ Օբաման 1915-ի իրադարձությունների հանդեպ պարզորոշ արտահայտել է իր դիրքորոշումը»: Նրան է լրացրել Աբրամովիցը, նախազգուշացնելով թուրքերին. «Եթե նախագահ Օբամայի վարչակարգը չմիջամտի, ապա միանգամայն իրատեսական է, որ բանաձեւն այս անգամ հաստատվի Կոնգրեսում»:

Տիկին Փելոսին, ելնելով 2007-ի փորձությունից, հոդվածում գրել է, որ այս անգամ «ավելի զգուշավոր» են լինելու: Նրան հավելել է հանձնաժողովի նախագահ Բերմանը. «Օրինագիծը Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստին կներկայացնենք այն դեպքում, եթե ապահովվի դրա հաստատման համար ձայների անհրաժեշտ քանակը: Հանձնաժողովի քվեարկությունից հետո դրանով ենք զբաղվելու»: Հովարդ Բերմանը միաժամանակ ԱՄՆ Կոնգրեսի առաջնահերթ խնդիր է համարել Հայոց ցեղասպանության ճանաչումը եւ պահանջել է, որ կոնգրեսականները պատմական այս ողբերգությունը ոչ միայն ճանաչեն, այլեւ ձիշտ բնութագրեն: Ի դեպ, Բերմանը, թուրքական մամուլի վկայությամբ, ունի հրեական ծագում եւ միակ կոնգրեսականն է, որը հոլոքոսթ է տեսել:

Գերմանիան ցեղասպանություն եզրից խուսափում է...

1-ին էջից

Ընդհանուր առմամբ դաշնային կառավարությունը վավերացնում է Հայաստանի եւ Թուրքիայի մերձեցմանն ուղղված կարեւորագույն քայլերը: Վերջերս կողմերը «նշանակալի քաղաքական կարիքաալ են ներդրել»՝ երկկողմանի բնականոն հարաբերությունների հասնելու համար:

Վկայակոչելով ԵՄ հանձնաժողովի 2009-ի հոկտեմբերին Թուրքիայի մասին զեկույցում առկա առաջընթաց քայլերը, Փիփերը գրում է, թե թուրքական հանրության մեջ դեռեւս կա հրապարակային եւ ազատ բանավեճ՝ նաեւ դժվարին հարցերի մասին: Բայց ազատ կարծիք արտահայտելու վերաբերյալ տեսակետից, ինչպես նախկինում, թուրքական օրենսդրությունը բավարար երաշխիքներ չի բովանդակում:

5 տարի առաջ Բունդեսթագն իր բանաձեւում պաշտպանեց նաեւ հայերի տեղահանման եւ բնաջնջման պատմությունը դաշնության կրթության քաղաքականության խնդիր դարձնելը: Փիփերը չի առարկում հարցման հեղինակի այն պնդմանը, թե Ցեղասպանությունը միայն Բրանդենբուրգում է պատմություն առարկայի ուսումնական պլանում, այդուհանդերձ վկայակոչելով դաշնային իրավասությունների կարգը, ըստ որի երկրամասերի խնդիրն է պատմության ուսումնական պլանը կազմելը:

Անցյալ գումարման օրենսդիր մարմնում ձախ խմբակցությունը հայերի կոտորածների արժեւորման վերաբերյալ ներին լարված հակամարտություն էր արձանագրել: Գերմանիայի թուրքական համայնքի երկարամյա նախագահ պատգամավոր Հարֆի Քեսքինը կասկածի տակ էր առել, թե 1915-16-ին հայ ժողովրդի ոչնչացումը նախապատրաստված էր ու ցանկության արդյունք: Հարյուրհազարավոր թուրքեր էլ են այն ժամանակ սպանվել, երկու կողմն էլ անհամար զոհեր ու ծանրագույն ցավ են ապրել, ասել էր նա: Ի հեծուկս խմբակցության հնչեցրած քննադատության Քեսքինը պնդել էր իր տեսակետը: Բունդեսթագի 2009-ի սեպտեմբերին կայացած ընտրություններում նա չի վերընտրվել: (Վերոհիշյալի մասին «Ազգը» գրել է ժամանակին՝ 19.12.2006-ի, 09.05.2007-ի իր հրապարակումներում):

AZG NEW PDF.qxd 05/03/2010 22:43 Page 1

ՊԱՐՈՒՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Սարգսյանի ձուները

Սկիզբը՝ փետրվարի 18-ի, շարունակությունը՝ փետրվարի 25-ի համարում

- Բարեւ,- ինձ էր դիմում, շուրթերի շարժումը չէի նկատել:

Կարծել էի, թե հայ չէ:

- Բարեւ,- պատասխանեցի:

- Ուզելիք եմ բերել,- ասաց փորագրիչին,- ընդմիջում արեք, հետո կշարունակեք:

- Ի՞նչ նեղություն,- արձագանքեց վարպետը,- մենակ ջուրը բերեիր, հերիք էր:

- Բացիչ չեմ բերել, գործիքների մեջ չկա՞ հարմար բան:

Փորագրիչը հանքային ջրի երկու շիշ վերցրեց, բերանները հարմարեցրեց իրար եւ մի շարժումով երկուսն էլ բացեց: Սպասեց, որ ժայթքող «Ջերմուկը» հանդարտվի, ապա մեկնեց կնոջը: Վերջինս գլուխն օրորեց:

Ես նույնպես մերժեցի:

Կինը նայում էր տառերին:

- Չէի ուզում անունը գրել տալ,- ասաց,- սովորական գերեզմանաքար է դառնում, գուցե ջնջեք, փողը կտամ...

- Փողը կաղ չունի, քուր ջան... Ես էդ մարդու անունն առանց փողի էլ կգրեմ, հավատա... Գերեզմանի քարին անուն պիտի գրվի՛...

- Ո՞ւմ համար գրվի,- կինն իմիջիայլոց էր առարկում,- ո՛չ ժառանգ ունի, ո՛չ հիշող...

- Հիշատակն աշխարհինն է,- վարպետը շարունակում էր խփել հատիչին՝ ջնջելու առաջարկն անտեսելով,- քարին գրածը հավերժ է...

- Իրեն պանողների ժառանգնե՞րը պիտի հիշեն,- կինն իր խոսքն էր շարունակում՝ չլսելով փորագրիչին:

- Հա՛, հենց պանողների համար պիտի գրվի, ամենից առաջ...

- Նորից համոզեցիք,- կինը սիգարետ ու վառիչ հանեց, վառելուց հետո խոր ներս քաշեց ծուխը, ապա, կարծես հանգստացած, ձեռքերը՝ գրպաններում, սիգարետը՝ շուրթերի արանքում, հետեւում էր փորագրիչի աշխատանքին: Խառնված մազերը քամուց երբեմն ծածկում էին ակնոցը:

- Վերեւն ի՞նչ գրեմ,- հարցրեց վարպետը,- մտածե՞լ ես:

- Չգիտեմ... Եթե անուն գրվում է, վերեւը պետք չէ...

- Է՞,- վարպետն ընդհատեց աշխատանքը,- էլ ինչի՞ տակից բռնեցի...

- Դուք գրեք,- առաջարկեց կինը,- մի լավ միտք, ծանոթ է պատմությունը... Կամ Դուք,- դարձավ ինձ,- տեղացի եք, չէ՞... Ճանաչո՞ւմ էիք պահակին...

- Իհարկե, շատ լավ...

- Դե, մի բան ասեք, թող գրի...

- Ես չեմ կարող,- կարկամեցի,- որովհետեւ ինձ միշտ մեղավոր եմ համարել նրա մահվան համար:

- Մեղավո՞ր,- հետաքրքրվեց կինը,- Դուք քանի՞ տարեկան էիք այդ ժամանակ, քսան տարի է անցել, չէ՞...

- Այո, քսան տարի առաջ, տասներեք տարեկան էի, յոթերորդ դասարանում...

- Յոթերո՞րդ,- կինը մատներով հաշվեց,- ես էլ էի տասներեք տարեկան յոթերորդ դասարանում... Բայց ի՞նչ կարող էիք անել:

- Կարող էի... Ես կարող էի գոռալ, որ սարի պահակը մեղավոր չէ, որ նա չէր անի այդ գարշելի բանը...

- Գարշելի՞... Ինչո՞ւ հենց գարշելի, ոչ ուրիշ բառ՝ սարսափելի, ահավոր, անմարդկային, անասնական... Այսինքն՝ գուցե տղամարդկանց համար սարսափելի չէ, ի՞նչ է եղել որ...

- Ինձ որ մնար, ես դրանց կսպանեի,- քթմնջացի ամոթահար:

- Էդոնք ֆաշիստ են,- պոռթկաց վարպետը,- թուրքի լամուկ, ես էդոնց աչքերը կփորեի...

- Ուրեմն պահակը չի՞ արել,- հարցրեց կինը,- հասա՞տ...

- Բոլորը գիտեին, որ նա չի արել:

- Դու ամեն ինչ տեսե՞լ ես,- հարցրեց ինձ վարպետը:

- Բացի վերջին պահից. դասատուները չթողեցին...

- Ի՞նչ է եղել վերջին պահին,- կինը մոտեցավ ինձ:

Գետնի մեջ խրված մեծ քարը շրջանցելու համար ոտքը թեք գցեց եւ հավասարակշռությունը կորցրեց, գուցե եւ լարվածությունից էր: Ընկնելու շարժումից թեքվեց ու ավելի մոտեցավ, հասցրեցի առանց քայլ անելու, ձեռքերս պարզելով ուսերը բռնել: Կամ ես էի կաշկանդվածությունից թույլ պահել, կամ ինքն էր անուշադիր, առաջ եկավ եւ խփվեց ինձ՝ ծածանվող շեկ մազերը երեսիս շփելով ու դեմքը կրծքիս սեղմելով: Հանկարծակի էր ծիծաղը, չոր, կարճ: Երբ հետ քաշվեց, կարմրություն նկատեցի դեմքին, Սեդան էր այդպես կարմրում՝ մի փոքր տեղ այտերի վրա, ցանի պես... Շուրթերը նույն ձեւի սեղմված էին, ամուր եւ անժպիտ, անթափանց ակնոցի եւ մարմինը կորցնող հագուստի հետ շատ բան թաքցնելով:

Ներողություն չխնդրեց եւ շնորհակալություն չհայտնեց, հարցրեց.

- Ո՞վ է սպանել նրան:

- Աղջկա մայրը, Նունիկ էր անունը... քարով խփել է գլխին... Բայց պահակն արդեն մեռած է եղել... կամ անգիտակից, վերջին շնչում...

- Քարով՝ գլխին,- կնոջ գունատ դեմքն ավելի էր սփրթնել,- երեւի այդ կինը հետո շատ է տանջվել...

- Չգիտեմ, երեւի...

բասկետբոլ էինք խաղում...

- Հարեւաննե՞ր էիք:

- Ոչ անմիջական... Հասնում էի նրանց տան մոտ ու դեռ սպասում, որ դուրս գա, եւ ջղայնանում էի, որ ծնողներիս պարտադրանքով պիտի ենթարկվեմ նրա քմահաճույքին ու զրկվեմ խաղից:

- Քմահաճո՞ւյք... Ասացիք՝ շներից էր վախենում:

- Մի շնից, որը ոչ ոքի վրա չէր հաչել ու չէր հարձակվել... Վախենում էր դրանից, ասում էր՝ ոնց որ չար բան մոտենա... Եվ այդ շունը կծեց նրան, կողքով անցել էր սուսուփուս, հանկարծակի շրջվել ու ոտքը բռնել էր,- ցույց տվեցի իմ ծնկածալից քիչ վերեւ,- հետո կարճ շոր չէր հագնում:

- Միասի՞ն էիք:

- Ոչ, մեր դասարանը դպրոցի հավաքականի հետ պիտի խաղար, առավոտ շուտ փախել էի... Երեսով էր տալիս, ծիծաղելով ասում էր՝ դու միշտ մեղավոր ես իմ առաջ...

- Մի՞շտ...

- Էլի բան էր եղել, առաջին դասարանում, գրչածայրով խփել էի հոնքին: Վախեցնելու

- Ցպարզվե՞ց՝ ինչու էր բացակայել դասից ու ձոր իջել...

- Չէ, դասարանում մոտ ընկերուհի չուներ, աղջիկներն ավելի շատ էին ծաղրում նրան:

- Ինչո՞ւ:

- Միամտության համար, որ լրիվ երեխա է դեռ, ոչ մի բանից գաղափար չունի...

Իսկ իրենք արդեն կրծկալ էին հագնում. Սեդային եւ նրա նմաններին ծաղրելու առիթներից մեկը: Հագնողները հպարտանում էին, քչփչոցներից էինք գլխի ընկնում, շուտով ինքներս էինք կարողանում որոշել, թե ով է հագնում: Սեդան այդպես էլ չհայտնվեց նրանց մեջ:

Ես նստում էի վերջում, մենակ, երբեմն գալիս էր կողքս, իսկ երբ երկու դասարանները միանում էին, երեքով էինք նստում: Դպրոցում ուշադրություն չէի դարձրել, հետո հայտնաբերեցի, որ միացյալ դասերին նա հայտնվում էր իմ նստարանին: Ազատորեն սեղմվում էր ինձ, միակ երեխա էր, քրոջ ու եղբոր հետ չէր տեսել, զգում էի ուրախությունը, ջերմանում էր, աշխուժանում, այդպիսի պահերին «պա-

- Ճի՞շտ է, որ նրանց մեջ երեխաներ են եղել:

- Ճիշտ է, երկու աղջիկ, մեր դասարանից:

- Ասված, ասված,- գլուխը տարուբերեց վարպետը՝ զարկերն արագացնելով:

- Աղջիկն է՞լ էր ձեր դասարանից,- շարունակեց հարցուփորձը,- անունն ի՞նչ էր:

- Սեդա:

- Սիրո՞ւն աղջիկ էր:

- Երեխա էր, նույնիսկ յոթերորդ դասարանցու համար, մանկական, միամիտ, վիզը բարակ, վտիտ, դեմքը փոքր, աչքերը մեծ, կապույտ... ոնց որ ձնծաղիկ... ձնծաղիկ էլ ասում էինք...

- Հետո ի՞նչ եղավ,- չոր ձայնով ընդհատեց կինը,- որտե՞ղ է հիմա նա:

- Չգիտեմ, հեռացան գյուղից, ուր՝ ոչ ոք չգիտեր... Հետո ոչինչ չեմ լսել:

- Դու նրա ի՞նչն ես,- փորագրիչը դիմեց կնոջը:

- Ո՞ւմ, Սեդայի՞...

- Չէ, պահակի, Երեմի:

- Բարեկամը,- չհաղթեց կինը եւ նորից դարձավ ինձ,- կարո՞ղ եք ամեն ինչ պատմել:

- Մեղք չե՞ս, քուր ջան,- անհանգստացավ փորագրիչը, նկատելի համակրանքով էր վերաբերվում կնոջը, - ի՞նչ պիտի հիշի, երեխա տղա է եղել:

- Նման բաները չեն մոռացվում, ճիշտ չէ՞:

Ինձ էր ուղղված, պատասխանեցի.

- Ամեն ինչ աչքերիս առաջ է. մարդիկ, դեմքերը, կատաղությունը, ժխորը, պահակի դեմքը՝ անտարբեր, լրիվ անտարբեր, անշարժ, քաշքշում էին, գլուխը փայտի պես խփվում էր քարերին... Մոր ահավոր, սուր ձայնը, աչքերը դուրս էին լցվել... Օրը, օդը՝ հիմիկվա պես... Հոկտեմբերն էր, նույն օրերը...

- Ամսաթի՞վը...

- Ամսաթիվը՝ չգիտեմ... Ուշադրություն չեմ դարձրել... Կարող եմ տեղը բերել, հինգշաբթի էր, որովհետեւ վերջին երկու ժամերը հայոց լեզու եւ գրականություն էին...

- Դասերի ժամանա՞կ է եղել:

- Վերջին ժամին, դասն ավարտվում էր, նոր տեսանք, որ Սեդան դասարանում չէ...

- Առաջին հե՞րթ էիք:

- Առաջին, տարրական դասարաններն էին երկրորդ հերթ:

- Ոնց որ մեր դպրոցում... Դասերը քանիսի՞ն էին սկսվում, ութն անց կե՞ս...

- Ութին... Սեդան խնդրում էր, որ միասին գնանք, շներից էր վախենում... Իսկ ես ուզում էի շուտ գնալ, դասերից առաջ

համար գրիչը շարժեցի աչքերի դիմաց, իսկ ինքը գլուխն առաջ բերեց... Գրչածայրը միլիմետրի տարբերությամբ աչքը չմտավ... Հոնքը ճղվեց, արյուն եկավ, բայց բոլորն ուրախացել էին, Նունիկը փառք էր տալիս, որ աղջիկը կուրանալուց է փրկվել... Հետո ասաց ինձ՝ աչքը հանեիր, լավ չէ՞ր, էս փորձանքը չէր գա գլխներիս...

Նոր սիգարետ վառեց, ես էլ հանեցի, իսկ վարպետի բերանից անֆիլտրը միշտ կախված էր, հանգած թե ծխացող: Փորագրիչը բառ բաց չէր թողնում, թեեւ աշխատանքը չէր դադարեցնում, իսկ լարվածությունն արտահայտում էր մուրճի զարկերով: Կինը հանգիստ էր, զուսպ, փաստեր հավաքող ժուռնալիստի պես հարցեր էր տալիս կամ մի բառի հարցական կրկնությամբ ստիպում էր շարունակել պատմությունը:

- Ձեզ պատժեցի՞ն,- շարունակեց նա:

- Դպրոցում՝ չէ: Ծնողներս շատ ջղայնացան... Միշտ զգուշացնում էին ու հետեւում, որ հանկարծ Սեդային նորից չնեղացնեմ, պաշտպանեմ նրան, իրար հետ գնանք դասի, իրար հետ գանք...

- Տիպ էր երեւի, ավելորդ բեռ, պարտականություն, քմահաճ աղջիկ...

- Սեդան քմահաճ չէր, խելոք էր, հնազանդ, ինչ անեի՝ ենթարկվում էր, ինչ ասեի՝ կհավատար... Անհավատալի ստեր էի փչում ու իմ հորինած կինոները պատմում...

- Հավատո՞ւմ էր,- երկրորդ անգամ ծիծաղեց եւ էլի կարճ ու կտրուկ, ակնթարթային արտաբերությամբ:

- Հավատում էր եւ իր հավատով ու վստահությամբ ամաչեցնում էր ինձ... Այն ժամանակ չէի ամաչում, հանգիստ խղճով խաբում էի նրան, հետո էի ամաչում...

- Հետո՝ ե՞րբ, իր ժամանա՞կ, թե՞ ավելի հետո...

- Ավելի հետո:

- Ուրեմն հիշել եք նրան:

- Միշտ եմ հիշել, իրեն ու սարի պահակին... Ոչ թե հիշել եմ, միշտ ինձ հետ են եղել... Երկուսի առաջ էլ մեղավոր մնացի, եւ կմնամ, ամբողջ կյանքում...

- Սեդայի առաջ ինչո՞վ եք մեղավոր, գրչածայրի ու շան կծածի համա՞ր...

- Ե՛վ գրչածայրի ու շան կծածի, ե՛ւ կատարվածի համար, որ չեմ իմացել ու պաշտպանել նրան: Մեղավոր եմ, որ ջղայնանում էի, որ կոպիտ էի, քշում էի նրան... Հենց նախորդ դասամիջոցին կոպիտ խոսք էի ասել: Ուրիշ ժամանակ առանց ինձ ասելու ձոր չէր գնա...

ղած տոլմա» մականունն ամենեւին չէր բռնում նրան:

Ջեռքս մնացել էր երկուսիս միջեւ, չէի քաշել, երբ սղղալով մոտեցել էր ինձ: Արմունկը սեղանին դրած ու թեքված, գրեթե մեջքով էր դարձել ինձ, ճտվալով խոսում էր մյուս կողքին նստած աղջկա հետ: Մինչ այդ, խաղերի ու քաշքշոցների կամ մեր սովորական խոսակցությունների ժամանակ միշտ էլ ձեռք էի տվել նրան՝ առանց որեւէ տարբերություն զգալու ուսերի կամ ծնկների եւ ազդրերի կամ կոնքերի միջեւ: Նույն չորությունն էր, տղայական անմիջականությունն ու անիմաստ հպումը: Ինչ-որ փոփոխություն էր տեղի ունեցել: Վտիտ ոտքը լցված էր, ուռուցիկ ու փափուկ, նաեւ տաք ու առաձգական: Ե՛վ տաքությունն էր ուրիշ, ե՛ւ փափկությունը, որն ուսից ու կողքից էլ էի զգում:

Շրջվեց, հիմա առաջ հակված մարմնով ընկերուհու դեմն էր փակում:

«Ջեռքդ ինչ տաք է»,- շշնջաց՝ մոտիկից նայելով աչքերիս:

Դասի ժամին ամեն ինչ շշնջոցով էինք ասում, բայց այս շշնջոցն էլ էր ուրիշ:

«Ոտքդ է տաք»,- ասացի:

Նա էլ հավանաբար իմ դեմքին էր փոփոխություն նկատել կամ անսովորություն էր զգացել, նայում էր փայլող աչքերով: Երեսը նույնպես շողում էր, տարօրինակ էր շիկնանքը, դեմքի դալկության վրա կարմիրն ընդգծված էր երեւում, դաջվածքի պես, իրար մոտ կետերով եւ մի փոքր տեղ միայն:

«Իմ ամենատաք տեղը գիտե՞ս որն է,- ձեռքս քաշեց, մտցրեց ազդրերի արանքն ու ծնկներն իրար սեղմեց,- տաք է, չէ՞, որ մրսես, կտաքացնեմ»:

- Հիշողությունների մե՞ջ էիք ընկել,- հարցրեց կինը:

- Սարերին էի նայում,- ասացի,- իմ թուլությունն են, գեղեցիկ տեսարան է ինձ համար:

- Ի՞նչ կա գեղեցիկ,- կինը հայացքը պտտեց կիլոմետրեր խորացող ձորն ամփոփող բլրաշարի տափակ գագաթներով,- ո՛չ կանաչ կա, ո՛չ բարձրություն ու խորություն, ամենուր քար է ու միայն քար... Գյուղի կողմում գոնե քարափներ կան, իսկ այստեղ սարային անապատ է, դաժան տեսարան...

Նրա գլխի շարժումին հետեւելով՝ ես ամաչեցի սարերով հիանալու եւ խոսքերիս համար: Աչքերը չէի տեսնում, բայց պատկերացնում էի, թե ինչպես կնայի սարերին ձորի դեմքի տպավորությամբ՝ լլկված ընկած աղջկա հայացքով...

Շարունակությունը՝ մարտի 11-ին

AZG NEW PDF.qxd 05/03/2010 22:43 Page 1

Եթե թուրքերը չժխտեին ցեղասպանությունը, CBS-ը չէր հեռարձակի այս ծրագիրը

Թուրքերը միայն իրենց պետք է մեղադրեն այն դժբախտության համար, որ բաժին ընկավ նրանց փետրվարի 28-ին Հայոց ցեղասպանության վերաբերյալ CBS-ի հեռարձակած ծրագրի առնչությամբ:

Եթե չլինեին թուրքական կառավարության շարունակական ժխտումներն ու խեղաթյուրումները, հայերի ցեղասպանության հարցը վաղուց մոռացված կլիներ համաշխարհային պատմության մեջ: Բայց քանի որ թուրքերը մերժում են դեմ առ դեմ կանգնել իրենց գործած ոճրագործությունների հետ եւ շարունակում են հորինել սոսկալի սեր, արդարամիտ մարդիկ աշխարհի տարբեր վայրերում զանազան միջոցներ են ձեռք առնում ճշմարտությունն ասելու համար: Նման ձեւով վարվեց CBS-ը՝ անցյալ կիրակի օրը հեռարձակելով իր «60 րոպե» ծրագիրը: Այնքան ժամանակ, որ թուրքերը շարունակեն չընդունել ճշմարտությունը, նրանք ստիպված են լինելու դիմակայել զանգվածային սպանողների եւ ցեղասպանությունը ժխտողների միջազգային հանրության պիտակներին՝ որպես արժանի պատիժ նման գազանային ոճիրներ գործելու եւ ապա դրանք քողարկելու համար: Հայ ազգի բնաջնջման պատասխանատուներ՝ Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը չէին կարող երբեւէ պատկերացնել, որ մեկ դար անց միլիոնավոր մարդիկ աշխարհի տարբեր ծայրերում հիշելու են 1915 թվին գործած իրենց սարսափելի ոճիրները:

Հատկանշական է, որ CBS-ի հեռարձակումից մի քանի օր առաջ թուրքական կազմակերպություններն արդեն հորդորում էին իրենց աշխատակիցներին նամակներ հղել հեռուստաընկերության գործադիրներին՝ բողոքելու ընդհանուր ծրագրի Հայոց ցեղասպանության բաժնի դեմ, առանց նույնիսկ իմանալու որեւէ բան դրա բովանդակության մասին: «Գող՝ սիրտը դող» հայկական հայտնի ասացվածքը շատ դիպուկ նկարագրում է թուրքերի այս տարօրինակ վերաբերմունքը: Ազատ թարգմանությամբ սա բնորոշում է մի «գողի, որն անընդհատ վախենում է բռնվելուց, բացահայտվելուց»: Մեղավորի զգացումներով թուրքերը մշտական վախի մեջ են, որ իրենց կմեղադրեն ցեղասպանություն իրագործելու մեջ եւ այդ պատճառով էլ բարձրաձայն հայտարարում են, որ իրենք անմեղ են, նախքան որեւէ մեկը կներկայացնի նման մեղադրանք:

Հայերի ցեղասպանությանը վերաբերող 12 րոպեանոց հատվածն ամբողջովին մերկացրեց ամենաողբերգական ձեւով թուրքերի անմեղության առասպելը: CBS-ի լրագրող **Բոբ Սայմոնը պրոֆ. Փիթեր Բալաֆյանի** հետ մեկնել է Դեր Զոր, Սիրիա՝ «Հայկական Օսվենցիմը», որտեղ նրանք իրենց մատներով անապատի հողը մի փոքր փորելով դուրս են բերել եղեռնի ծագումով հայ զոհերի ոսկորների մնացորդները: (Այս մասին տես Փիթեր Բալաֆյանի հոդվածը 2009 թվականի մայիսի 9-ի «**Ազգ**»-մշակույթ հավելվածում - խմբ):

Ցնցող տեսարանները պետք է որ անջնջելի հետք թողած լինեն միլիոնավոր հեռուստադիտողների մտքերում: Թուրք ճարտար ժխտողները չէին կարող ջնջել այդ տպավորությունը, որ մարդիկ սպանել էին իրենց սեփական աչքերով տեսնելուց հետո: Այլեւս ոչ ոք չէր կարող հավատալ նախկին դեսպան **Նաբի Սենսոյի** խաբեպատիր խոսքերին, որ հայերին ոչ թե սպանել են, այլ պարզապես տեղահանել: Բոբ Սայմոնի ճնշումներից հետո Սենսոյը նախ փորձեց նսեմացնել դուրս բերված ոսկորների նշանակությունը, ապա իր սերը քողարկելու միտումով նշեց, որ ՄԱԿ-ի ցեղասպանության բնորոշումը ներառում է «մտադրվածության» գործոնը: Ի վերջո նա ընդունեց, որ շատ հայեր «մահացել էին», բայց պնդեց, որ դա թուրքերի մտադրությունը չէր: Ինչպե՞ս կարող էին 1,5 միլիոն տղամարդիկ, կանայք եւ երեխաներ՝ տեղահանված Օսմանյան կայսրության ամենաարբեր անկյուններից, օդում ցնդել: Վաշինգտոնում Թուրքիայի դեսպանը, որին պատշոնագրկեցին այս հարցազրույցից հետո, հարմար գտավ չհիշատակել ՄԱԿ-ի բանաձեւի մի այլ հոդվածը, որտեղ նշվում է, որ «ֆիզիկական բնաջնջման պայմաններ ստեղծելն էլ» հավասարազոր է ցեղասպանության: Ցավալի է, որ CBS-ը նման մարդկանց էլ է ամբիոն տրամադրում, մի բան, որ նա հավանաբար երբեւէ չէր անի Հոլոքոսթի վերաբերյալ ծրագիր պատրաստելիս: CBS-ը կհեռարձակվե՞ր մի նացիստի կամ Հոլոքոսթը ժխտողի խոսքը պարզապես «պատմության մյուս կողմը» ներկայացնելու համար:

Իհարկե, հնարավոր չէր 12 րոպեում անդրադառնալ Հայոց ցեղասպանության բոլոր կողմերին: Այդուհանդերձ, ներկայացվածը կարող էր առավել ավերիչ լինել թուրքերի համար, եթե պրոդյուսերներն ավելի խորամուխ լինեին հարցերի մեջ: Օրինակ, ճիշտ չէր այն տեղեկությունը, որ «ԱՄՆ-ի ոչ մի նախագահ չի արտասանել ցեղասպանություն բառը»: Հայտնի է, որ նախագահ **Ռեյգանը** 1981 թվի ապրիլի 22-ին ակնարկել է Հայոց ցեղասպանությանը: Այնուհետեւ, Բոբ Սայմոնը, ճիշտ է, նշեց, որ թուրքական ճնշումների հետեւանքով 2007-ին Կոնգրեսով չանցավ ցեղասպանության բանաձեւը, բայց նա չհիշատակեց, որ երկու այլ բանաձեւեր ընդունվել էին Մ. Նահանգների Ներկայացուցիչների պալատում 1975-ին եւ 1984-ին: Եվ վերջապես Բոբ Սայմոնը սխալմամբ նշեց, որ հայ-թուրքական արձանագրություններում մի կետ կա, որ կոչ է անում ստեղծել պատմական հարթությամբ մի հանձնաժողով, քննելու, «թե արդյոք ցեղասպանություն կատարվե՞լ է, թե՞ ոչ»: Չնայած արձանագրություններ այդ հատվածը բավական աղոտ է ձեւակերպված, դա, համենայն դեպս, նման փաստ արձանագրելու կոչ չի անում:

Անկախ այս սխալներից, միլիոնավոր ամերիկացիներ, ովքեր դիտեցին այս ծրագիրը, պետք է հստակ պատկերացում կազմած լինեն, որ թուրքերը 1915-ին զբաղվել են «ռասայական ոչնչացմամբ», ինչպես դեսպան Հենրի Մորգենթաուն էր բնորոշել:

CBS-ին ուղղված թուրքական բացասական արտահայտություններին հակադարձելու համար խորհուրդ ենք տալիս էլ.փոստով (http://www.cbsnews.com/video/watch/?id=6253043 n.) շնորհակալություն հայտնել «60 րոպե» (60 minutes) ծրագրին եւ, անշուշտ, պրոֆ. Փիթեր Բալաֆյանին՝ CBS-ի խմբին դեպի սիրիական անապատները ընկերակցելու եւ իր փայլուն բացատրությունների համար:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆոռնիա կուրիեր»
Թարգմ. Հ. Ծ.

Ֆրանսիան միացավ «Հյուսիսային հոսքի» նախագծին

«Միստրալը»՝ ռուս-ֆրանսիական «վստահության խորհրդանիշ»

ՌԴ նախագահ **Դմիտրի Մեդվեդեւի** փարիզյան այցի օրերին կնքված խոշորագույն գործարքն այն է, որ ֆրանսիական «Գազ դը Ֆրանս Սուեզ» (GDF Suez) ընկերությունը դարձավ «Հյուսիսային հոսք» նախագծի բաժնետեր: RusEnergy գործակալության վերլուծության **Միխայիլ Կրուտիխինի** կարծիքով, նախագծում ֆրանսիական ընկերության ընդգրկումը կարելի է համարել կարեւոր ուղենիշ:

«Բալթիկ ծովի հատակում «Հյուսիսային հոսքի» անցկացման աշխատանքները կարելի է սկսել: Ֆինանսավորման սխեմաներն արդեն համաձայնեցված են, մասնակիցները տեղում են, մշակվում է խողովակադիր նավերի հետ կապված պայմանագիր», ասել է Կրուտիխինը BBC-ի թղթակցին:

Բալթիկ ծովի հատակով դեպի Եվրոպա գազամուղ անցկացնելու «Գազպրոմի» նախագծին ավելի վաղ հավանություն էին տվել Ֆինլանդիան, Շվեդիան եւ Գերմանիան:

«Գերմանական, հոլանդական, ֆրանսիական ընկերությունների համար անչափ ձեռնտու կլինի Եվրոպայում իրենց օբյեկտներն օգտագործել ռուսական գազի բաշխման նպատակով: Դրանք փաստորեն դառնում են «Գազպրոմի» գործարքների մասնակիցներ», ասում է Կրուտիխինը:

Ֆրանսիայի նախագահ **Նիկոլա Սարկոզին** ՌԴ նախագահի այցի օրերին խոսել է նաեւ մեկ ուրիշ խոշոր գործարքի մասին՝ վերահաստատելով Ռուսաստանին «Միստրալ» ուղղաթիռակիրներ վաճառելու Ֆրանսիայի մտադրությունը: RFI ռադիոկայանի տվյալներով, «Միստրալի» առուվաճառքին նվիրված բանակցությունները շուտով ավարտվելու են: Որոշ տեղեկությունների համաձայն, Մոսկվային վաճառվելու է ընդամենը 4 «Միստրալ», բայց՝ առանց սպառազինության: Բալթյան երկրները եւ Վրաստանը երկյուղներ ունեն, որ դեսանտային գործողությունների օժանդակման համար նախատեսված «Միստրալները» կարող են սպառնալ իրենց անվտանգությանը:

Սարկոզին Փարիզում՝ համատեղ մամլո ասուլիսում հայտարարել է, որ Ռուսաստանին ռազմանավեր վաճառելու որոշումը կապված է Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման հետ: Մեդվեդեւը իր ելույթում թեեւ չի խոսել այդ ծրագրի հարցում Մոսկվայի դիրքորոշման սկզբունքային փոփոխությունների մասին, սակայն չի էլ բացառել իրադարձությունների նման զարգացումը:

Երկու նախագահները «Միստրալն» անվանել են ռուս-ֆրանսիական հարաբերություններում «վստահության խորհրդանիշ»: Ուղղաթիռակրի հետ կապված գործարքը ձեռնտու է ինչպես Ռուսաստանին, այնպես էլ Ֆրանսիային: Ֆրանսիացի լրագրող **Դմիտրի դը Կոչկոյի** խոսքերով, ներկայիս ճգնաժամի պայմաններում «Միստրալի» կառուցումը 2010-2011 թթ. Ֆրանսիայում աշխատանքով կապահովի հազարավոր մարդկանց:

Չին անջատականների առաջնորդը Պակիստանում սպանվել է ամերիկյան հրթիռից

«Թուրքեստանի իսլամական կուսակցություն» չինական անջատական խմբավորման առաջնորդը սպանվել է Պակիստանում ամերիկյան անօդաչու ռազմօդանավի գրոհի ժամանակ: Այդ մասին հաղորդում է «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստալիքը:

Աբդուլ Հաք ալ Թուրքիստանին սպանվել է Հյուսիսային Վազիրստանում՝ աֆղանա-պակիստանյան սահմանի մոտակայքում: «Թուրքեստանի իսլամական կուսակցությունը» մեղադրվում է «Ալ Ղաիդայի» հետ կապեր ունենալու մեջ: ԱՄՆ-ում այդ անջատական խմբավորումը մտցված է ահաբեկչական կազմակերպությունների ցանկի մեջ: Չին անջատականների առաջնորդի մահվան մասին հաղորդումներ են հրապարակել «Թալիբան» շարժման եւ Պակիստանի կառավարության աղբյուրներ:

Պեկինում պաշտոնական անձինք գոհունակություն են արտահայտել անջատականների առաջնորդի մահվան կապակցությամբ: Աբդուլ Հաք ալ Թուրքիստանին ՉԺՀ իշխանություններին հանիցս մեղադրել էր Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանում մահմեդականների սպանությունների մեջ: 2009-ի ամռանը այդ շրջանում ույղուրների խռովության ճնշումից հետո իսլամիստ անջատականների առաջնորդը հանդես էր եկել ՉԺՀ կառավարությանը հասցեագրված սպառնալիքներով:

2009-ի հոկտեմբերին «Ալ Ղաիդայի» առաջնորդները Չինաստանի ույղուրներին կոչ էին արել «սրբազան պատերազմ» հայտարարել ՉԺՀ իշխանություններին: Բացի դրանից, ահաբեկիչները սպառնացել էին չին ղեկավարներից վրեժ լուծել զոհված մահմեդականների համար:

Գվատեմալայի ոստիկանապետը՝ թմրամաֆիայի աջակից

Գվատեմալայի ոստիկանապետը եւ ոստիկանության հակաթմրադեղային ստորաբաժանման ղեկավարը ձերբակալվել են թմրամաֆիայի հետ կապված լինելու կասկածանքով, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ոստիկանապետ Բալտասար Գոմեսը եւ հակաթմրադեղային գերատեսչության ղեկավար Նելլի Բոնիլլան կասկածվում են թմրանյութերի գաղտնի առեւտրի եւ իրավապահ մարմինների 5 աշխատակիցների սպանությանը մեղսակից լինելու մեջ:

Երկրի գլխավոր դատախազ Ամիլկար Վելասկեսը լրատվամիջոցներին հայտնել է այն կասկածների մասին, որ ձերբակալված երկու պաշտոնյաները մասնակցել են նաեւ ուրիշ հանցագործությունների. խոսքը մասնավորապես զենքի անօրինական շրջանառության եւ կողոպուտների մասին է:

EFE գործակալությունը հիշեցնում է, որ Գվատեմալայի ոստիկանապետը ձերբակալվեց ներքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնաթողությունից ընդամենը մեկ օր անց: ՆԳ փոխնախարարը կտրականապես ժխտել է ոստիկանական գերատեսչության ներսում հանցավոր ցանցի գոյությունը: Իսկ ներքին գործերի նախարարը պաշտոնանկ էր արվել իր ձերբակալությունից երկու օր առաջ:

ՄԱԿ-ը Եգիպտոսին մեղադրեց աֆրիկացի գաղթականների սպանության մեջ

Մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատար Նավանեթեմ Պիլլեյը Եգիպտոսի իշխանություններին մեղադրել է աֆրիկացի այն գաղթականների «գնդակահարման» մեջ, որոնք փորձում են Սինայի անապատով մուտք գործել Իսրայել: Նա ընդգծել է, որ 2007-ի հուլիսից մինչեւ օրս սպանվել է 60 մարդ, եւ Կահիրեին կոչ է արել անհապաղ սկսել տվյալ փաստերի անկախ եւ վստահելի քննություն:

Պիլլեյի խոսքերով, «Եգիպտոսի անվտանգության որոշ ծառայություններ» կրակում են անզեն մարդկանց վրա, եւ այդ գործողությունները հորջորջվում են «պայքար անօրինական գաղթի դեմ»:

«Գաղթականները հաճախ զոհվում են դժբախտ պատահարներից, երբ նավակներով կամ ուրիշ միջոցներով փորձում են հասնել հեռավոր վայրեր, բայց ինձ հայտնի չէ մեկ ուրիշ երկիր, որտեղ կառավարական զորքերը կանխամտածված սպանեին այդքան մեծաթիվ անզեն գաղթականների եւ փախստականների», ընդգծել է Պիլլեյը, որի խոսքերը մեջբերում է «Նյուզռու. Իսրայել» էլեկտրոնային հրատարակությունը:

Նավանեթեմ Պիլլեյի տվյալներով՝ միայն այս տարի սպանվել է 9 գաղթական, անցյալ տարի՝ առնվազն 19: Տասնյակ ուրիշներ վիրավորվել են կամ անհետ կորել: Զոհերի թվում կան մի քանի կին եւ առնվազն 1 երեխա:

Եգիպտա-իսրայելական սահմանի վրա աֆրիկացիների սպանության դեպքերի մեծ մասը Սինայի թերակղզում սահմանային հսկողությունն ուժեղացնելու համաձայնագրի հետեւանքն է: Եգիպտոսը եւ Իսրայելը նման համաձայնության էին հասել 2007-ի հուլիսին: Պիլլեյը 60 անզեն աֆրիկացիների սպանությունը համարում է «ոչ թե պատահականություն, այլ Եգիպտոսի հատուկ ծառայությունների նպատակամետ քաղաքականության հետեւանք»:

AZG NEW PDF.qxd 05/03/2010 22:43 Page 1

100 տարի առաջ եւ այսօր հայ գրատպությունը ներկայացնելու խնդիրները նույնական են

Հասարակական սեկտորն է ինքնակամորեն պատասխանատվություն ստանձնել

Սովորական մի բնակարանում, ոչ ժամանակակից տեխնիկայով արդեն տասը տարի է, ինչ 2008 թվականին հիմնադրված «Հայագիտական համազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը թվայնացնում է հայկական հնատիպ գրքերն ու պարբերականները (մինչեւ 1920 թվականը), ինչի մասին զրուցեցինք կազմակերպության ղեկավար Գեւորգ Ներսիսյանի հետ:

- Հնատիպ գրքերի ի՞նչ ժառանգություն ունենք այսօր:

- «Հայագիտական համազգային կենտրոն» կազմակերպությանը պատկանող 120 անուն հայկական հնատիպ գրքերից 100-ն արդեն թվայնացված է: Մեզ հասած 1106 անուն հայերեն հնատիպ գրքերը, որ տպագրվել են աշխարհի 35 քաղաքներում, պահվում են ինչպես Հայաստանի, այնպես էլ այլ երկրների թանգարաններում ու գրադարաններում, ինչն առավել կարեւոր է դարձնում դրանց թվայնացումն ու մատենագրումը՝ ընթերցողներին ու հետազոտողներին մատչելի դարձնելու համար:

- Ձեր ձեռնարկած ծրագիրն ի՞նչ նպատակ ունի:

- Ծրագիրը, որ ձեռնարկել եւ իրականացնում է կազմակերպությունը, նպատակ ունի մինչեւ 2012 թվականը ստեղծել հայ գրքարվեստը ներկայացնող, ինչով անասելի հարուստ է հայ մանրանկարչությունից արժեքավոր փոխառություններ առած գրատպությունը, կատարյալ զարդարան, որն, անկասկած, հնարավորություն կտա ոլորտում համապատասխան ուսումնասիրություններ իրականացնելու, ինչպես նաեւ հայ գրատպության 500-ամյակի կապակցությամբ լույս ընծայել «Զարդարվեստը հայ տպագիր գրքում» մատենաշարը, որի յուրաքանչյուր հատորյակը լուրջ գիտական աշխատություն է:

- Այդ ուղղությամբ թվայնացումից զատ գործ արվե՞լ է:

- Այս կապակցությամբ աշխատանքների իրականացման գործում ներգրավել ենք Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնի մագիստրատուրայի երիտասարդ ուսանողներին: Հարկ եմ համարում նշել, որ «Գրիգոր Մարզվանեցու հրատարակությունները եւ նրանց զարդարվեստը» թեմայով գիտական աշխատությունը հաջողությամբ պաշտպանվել է: Իսկ Ոսկան Երեւանցու եւ Մխիթար Սեբաստացու հրատարակություններն ու նրանց զարդարվեստը ուսումնասիրման փուլում են եւ ավարտին կհասցվեն հաջորդ տարվա ընթացքում:

- Ծրագիրը բավական տարողունակ է, արդյո՞ք արդեն իրականացված աշխատանքը 2012-ին այն ավարտելու պնդման համար իրատեսական հիմք է տալիս:

- Մինչ օրս կատարած աշխատանքը կազմակերպել ենք սեփական միջոցներով: Ստեղծել ենք համակարգչային ծրագրային միջավայր, որը ոչ միայն ընկալում, այլեւ ամփոփում է մուտքագրված նյութերը: Սակայն հույսը դնելով միայն սեփական միջոցների վրա, աշխատանքները հնարավոր է ավարտին հասցնել ոչ թե երկու, այլ տասը տարի անց՝ 2022 թվականին: Հասկանալի է, որ շտապելու անհրաժեշտությունն այլեւս անժխտելի է:

- Վստահաբար, գործունեության ընթացքում առնչվում եք նաեւ անցյալից եկող խնդիրների, առաջընթաց եղե՞լ է դրանց լուծման հարցում:

- 100 տարի առաջ, հայ տպագրության 400-ամյակը նշելիս, խնդիրներն այսօր ծառացածների հետ համարյա նույնական էին: Իսկ դրանք սահմանողը ինքը՝ Ամենայն հայոց բանաստեղծն էր: Այն ժամանակ Պետերբուրգի հայկական գաղութը, ինչպես նշված է Հովհաննես Թումանյանի կազմած փաստաթղթում. «...ուշադրության առնելով հայոց պատմագրության ու հայագիտության խեղճ վիճակն ու մեծ կարեւորությունը՝ խորհրդակցություն ունեցավ հայկական տպագրության 400-ամյակին նախաձեռնել-հիմնելու հայոց պատմագրության եւ հայագիտության ազգային ֆոնդ», որի նպատակն ամրագրող տասը կետերից թերեւս երկուսը կարելի է կատարված համարել Մատենադարան ինստիտուտ-թանգարանի հիմնադրմամբ ու հայագիտական բուհերի ստեղծմամբ, մնացյալ ութ կետերի իրականացումը կրկին տրված է ապագային, չնայած արդեն ունենք պեսություն, որը պատրաստվում է նշել հայ գրատպության 500-ամյակը: Հազիվ թե շահեկան կամ պատվաբեր լինի մեզ համար համաշխարհային մակարդակում արժեքավոր հայոց գրատպության հաջորդ հոբելյանը նշելիս նույն խնդիրներին դիմահար պատահելը: Այդ նկատառումը նույնպես ուշադրության առնելով, իրականացնում ենք եւս մի նախագիծ՝ հայկական պարբերական մամուլի մատենագրությունը, ինչի համար ստեղծել ենք հատուկ ծրագիր, որն ընդունակ է հայկական պարբերական մամուլի ավելի քան 200 տարվա պատմության ընթացքում 41 երկրներում ստեղծված 3100 անուն պարբերականների ողջ բովանդակությունը, այդ թվում նաեւ լուսանկարները թվային մատենագրությամբ ներկայացնելու: Այս ծրագրով արդեն իսկ մշակվել է տարբեր պարբերականների 500 համար:

- Մի՞թե կատարվող աշխատանքի կարեւորության գիտակցումը լիակատար բացակայում է պետական մարմիններում:

- Իհարկե, ո՛չ: ՀՀ մշակույթի նախարարությունը մեզ համար ապահովել է Հայաստանի գիտական ու հասարակական գրադարաններում, թանգարաններում, արխիվում պահվող նյութերի օգտագործման հնարավորությունը, իսկ 2011 թվականին Կենտրոնի մասնագետները հնարավորություն կունենան աշխատելու Ֆրանսիայի գրադարաններում ու թանգարաններում, բայց արդեն ֆրանսիական կողմի աջակցությամբ: Նման պատրաստակամություն հայտնեց Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի ու համագործակցության հարցերով խորհրդական Ժան-Պոլ Մատենը ժամանակ առաջ կայացած հանդիպման ընթացքում:

- Ներկայացված օժանդակությունը բավակա՞ն եք համարում նշված ժամկետում ծրագիրն ավարտին հասցնելու համար:

- Սա, իհարկե, գնահատելի հնարավորություն է, որը նկատելիորեն կնպաստի մեր կազմակերպության նպատակի՝ հայկական գրահրատարակչական ժառանգության եւ դրա միջազգային մշակույթում ազդեցության ներկայացումը կազմակերպելուն, սակայն ակնհայտ է, որ առանց պետական մոտեցման, պատշաճ ֆինանսավորման եւ անհրաժեշտ տեխնիկական միջոցների պարզապես կուշանանք:

Զրույցը վարեց՝
ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Հայաստանում է լեգենդար ջութակահար Պինկաս Ցուկերմանը

XXI-ի հեռանկարներ 11-րդ երաժշտական միջազգային փառատոնը ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ ներկայացնում է լեգենդար ջութակահար, բազմակի Grammy մրցանակակիր Պինկաս Ցուկերմանին՝ «Ցուկերման Չեմբըր Փլեյրս» (Zukerman Chamber Players) խմբով:

Փառատոնի կազմակերպիչների մի քանի տարիների ջանադրության շնորհիվ առաջին անգամ Երեւանում մեկ համերգային ծրագրով հանդես կգա մեր օրերի նշանավոր երաժիշտ եւ մշակութային գործիչ Պինկաս Ցուկերմանը:

Ցուկերմանը ծնվել է Թել Ավիվում, ուսանել Նյու Յորքի Ջուլիարդի քոլեջում՝ Իվան Գալամյանի մոտ: Վարում է կատարողական վարպետության ծրագիր Մանհեթենի երաժշտանոցում, ղեկավարում է մի շարք հեղինակավոր նվագախմբեր, իսկ 2009 թ.՝ նաեւ Լոնդոնի թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժորն է: Իբրեւ կամերային երաժիշտ նա հանդես է եկել Դանիել Բարենբոյմի, Վլադիմիր Աշկենազիի, Իցհակ Պերլմանի, «Օրիոն» եւ «Տոկիո» լարային քառյակների, Ռալֆ Կիրշբաումի, Ֆիլիպ Բրոնֆմանի, Ժակլին դյու Պրեի եւ կատարողական արվեստի այլ վարպետների հետ: Պինկաս Ցուկերմանի կատարումները հնչում են հոլիվուդյան բազմաթիվ ֆիլմերում: Վերջերս էլ նա վարել է Grammy մրցանակաբաշխությունը:

Համերգը տեղի կունենա այսօր՝ Արամ Խաչատրյան համերգասրահում, ժամը 19:30-ին: Ծրագրում կհնչեն Բոկերինիի, Մոցարտի, Բրամսի ստեղծագործություններից:

Փառատոնն անցկացվում է Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո:

Փառատոնի նախագահ եւ գեղարվեստական ղեկավար՝ կոմպոզիտոր, արվեստի վաստակավոր գործիչ Ստեփան Ռոստոմյան, փառատոնի գլխավոր մենեջեր՝ Սոնա Հովհաննիսյան: Վերջինս խոսանում է ողջ տարվա ընթացքում երաժշտասերներին պարգեւել բացառիկ համերգաշրջան:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Լեւոն Իսահակյան



102-ամյա հասակում կյանքից հեռացավ արվեստի վաստակավոր գործիչ, «Ճանապարհ դեպի կրկես» ֆիլմի ռեժիսոր Լեւոն Իսահակյանը, որի կենսագրությունը արտացոլում է հայկական կինոարվեստի տարեգրությունը, իսկ ֆիլմերը՝ հայրենիքի պատմությունը: Ծնվել էր Ալեքսանդրապոլում, եղել Լենինականի առաջին պիոներ տան տնօրենը, «Անուշ» ֆիլմում խաղացել Մոսի: Հեղինակն է ազգի ականավոր զավակների մասին շատ ֆիլմերի:

Լեւոն Իսահակյանն առաջին կինոռեժիսորն էր, որը խոսեց հայոց ցեղասպանության մասին՝ «Հայրենի երկիր» ֆիլմում:

Հուղարկավորությունը՝ մարտի 4-ին, ժ. 14:00-ին, հասցեն՝ Մաշտոցի պողոտա, 54, բնակարան 16:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ

Կինոարվեստի ճգնաժամ Հայաստանում

«ՆյուՅորք թայմս» թերթի 1929 թվականի մարտի 31-ի համարում գրված է, որ Հայաստանում 1920-ականներին գործել է 32 կինոթատրոն:

«Երեւանում հիմա ունենք ընդամենը մեկ ու կես կինոթատրոն,որտեղ հնարավոր է 35 միլիմետրով ֆիլմ ցուցադրել, այսինքն՝ 3 գործող էկրան՝ 2-ը «Մոսկվա» կինոթատրոնում, մեկը՝ «Նաիրի», իսկ միլիոն ու կես բնակչություն ունեցող քաղաքի համար դա շատ քիչ է: Ճիշտ է, կինո «Նաիրին» գործում է, բայց այնտեղ աշխուժություն չկա, նույնիսկ գովազդային պաստառները պատշաճ ձեւով կախված չեն, իսկ կինոթատրոնի ներքեւի մասն ամբողջովին զբաղեցրել են խանութները, ասում է կինոգրողդուստր Մելիք Կարապետյանը, «Այրարատ» (նախկին «Ռոսիա») կինոթատրոնի հրաշալի դահլիճը, որտեղ տեղավորում էր շուրջ հազար հոգի, տարիներ շարունակ չի գործում, մինչդեռ Հայաստանում այդպիսի կինոդահլիճ չունենք»:

Գործող 2 կինոթատրոններում էլ հիմնականում ցուցադրվում են բլոկբաստերներ՝ ֆիլմեր, որոնք վայելում են մեծ մասսայականություն, բայց չեն համարվում համաշխարհային կինոյի արժեքներ: Բլոկբաստերները,



որոնց բյուջեն կազմում է մի քանի միլիոն դոլար, սովորաբար ունենում են գովազդային մեծ ընկերություններ: Կինոարվեստը, սակայն, չի սկսվում ու վերջանում միայն բլոկբաստերներով, իսկ որտե՞ղ դիտել այնպիսի բարձրարժեք ֆիլմեր, որոնք տեղ են գտել կինոյի պատմության մեջ:

Մելիք Կարապետյանի նախաձեռնությամբ շաբաթ եւ կիրակի օրերին՝ ազգային պատկերասրահի կինոդահլիճում, ցուցադրվում են համաշխարհային կինոյի լավագույն օրինակները՝ սկսած հարյուր կինոյից՝ վերջացրած ժամանակակից ֆիլմերով:

«Տարիներ առաջ այդպիսի ֆիլմեր դիտել եմ Վաշինգտոնի ազգային պատկերասրահում: 2001-ին այնտեղ իմ նախաձեռնությամբ ցուցադրվել են Սերգեյ Փարաջանովի ֆիլմերը: Երբ վերադարձա Երեւան, մտածեցի՝ լավ կլինի, որ մեր պատկերասրահում էլ ունենք ֆիլմերի ծրագիր: 2004-ին դիմեցի պատկերասրահի տնօրինությանը, որն էլ ընդունեց իմ մտահղացումը, պատմում է ազգային պատկերասրահի ֆիլմերի ծրագրի ղեկավար Մելիք Կարապետյանը, ֆիլմերը մեծ դժվարությամբ եմ ձեռք բերում, երբեմն լինում են նվիրատվություններ, օրինակ՝ անցյալ տարի Վաշինգտոնի ազգային պատկերասրահը 50 ֆիլմ ուղարկեց, բայց հիմնականում ցուցադրում եմ իմ անձնական կինոդարանից»:

Մինչեւ մարտի վերջը պատկերասրահում ցուցադրվելու են ճապոնացի ռեժիսոր Ակիրա Կուռասավայի ֆիլմերը: Ծրագիրը նվիրված է ռեժիսորի ծննդյան 100 ամյակին, իսկ ապրիլին լինելու է համր ֆիլմերի ռեգիոնալ փառատոն, որի ժամանակ ցուցադրվելու են հայկական, վրացական ու ադրբեջանական ֆիլմեր:

Կինոդիտումներին ամեն անգամ ներկա են լինում ընդամենը 10-15 հոգի, եւ մուտքի տոմսերի հաշվին հավաքվում է չնչին գումար, որով նախ անհնար է ֆիլմեր ձեռք բերել, եւ բացի այդ պատկերասրահը ծրագրին աջակցում է միայն դահլիճով:

«Ֆինանսավորում չլինելու պատճառով այս սեզոնի ծրագիրը չի տպագրվել:Աջակցելու համար ամեն անգամ պետք է դիմես, խնդրես տարբեր կազմակերպությունների, բայց 5 տարի շարունակ խնդրելուց հոգնում ես: Արտասահմանում նման ծրագրերը ֆինանսավորվում են պետական կամ մասնավոր մշակութային ֆոնդերի կողմից», նշում է Մելիք Կարապետյանը:

Պատկերասրահն ուսանողների համար հատուկ զեղչեր է անում, երբեմն թույլ է տալիս անվճար դիտել ֆիլմերը, բայց ուսանողները, այն էլ ռեժիսուրայի կամ դերասանական բաժինների, հետաքրքրություն չունեն համաշխարհային կինոյի հանդեպ, այնինչ պատկերասրահում նրանք կարող են տեսնել այն հեղինակների աշխատանքները, որոնց մասին կարդում են ուսանողական դասագրքերում:

Արդյունքում ունենում ենք մի տխուր պատկեր՝ չկա տեղական կինոարտադրություն, չկա հետաքրքրություն կինոարվեստի պատմության հանդեպ:

«Տեղական կինոարտադրությունը վերջացավ խորհրդային կարգերի փլուզումով: Տարեկան 1-2 ֆիլմ է արտադրվում, ինչը շատ քիչ է, սակայն մի հաջողված ֆիլմը պետական բյուջեին կարող է բավականին մեծ եկամուտ բերել: Մեր օրենսդրական դաշտը կինոարտադրության համար խիստ անբարենպաստ է», ասում է Մելիք Կարապետյանը:

Կինոարտադրության մեջ կա մի օրենք, որ 10 ֆիլմից միայն մեկն է հաջողված լինում: Հիմա ամբողջ աշխարհում պտտվում է իրանական կինոյի ֆենոմենը, բայց դա իրանական կինոարտադրանքի 10%-ն է, մնացյալը չհաջողված ֆիլմեր են: Եթե Հայաստանում տարեկան արտադրվում է 1-2 ֆիլմ՝ մոտավորապես 90 րոպե, ապա տարեկան ունենում ենք ընդամենը 10 րոպե տեւողությամբ որակյալ արտադրանք:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 05/03/2010 22:43 Page 1

Գլեբ եղբայրները հաղթանակ պարգեւեցին բելառուսներին

ՀՀ հավաքականը մրցաշրջանը սկսեց պարտությամբ

Երեկ ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն Անթալիայի «Աքաքուրֆ» մարզադաշտում ընթացիկ մրցաշրջանում իր անդրանիկ ստուգողական հանդիպումն անցկացրեց՝ ուժերը չափելով Բելառուսի հավաքականի հետ: Ըստ Armsport.am կայքէջի թղթակցի, որը Թուրքիայից հանդիպման օնլայն ռեժիմով էր վարում, խաղն անցկացվել է առանց հանդիսականների: Խաղից առաջ անվտանգության ապահովման միջոցառումներ են անցկացվել, տոմսեր չեն վաճառվել: Հանդիպմանը ներկա են գտնվել միայն Հայաստանի եւ Բելառուսի պատվիրակությունները, որոնք մարզադաշտ են մտել հատուկ անցագրերով:

Մրցակիցները խաղը սկսել են հետեւյալ մեկնարկային կազմերով.

Հայաստան-Ռոման Բերեզովսկի, Սարգիս Հովսեփյան, Հայր Մկոյան, Ալեքսանդր Թադեւոսյան, Աղվան Մկրտչյան, Լեւոն Փաչաջյան, Արարատ Առաքելյան, Կառլեն Մկրտչյան, Արտավազդ Քարամյան, Մարկոս Պիզելի, Էդգար Մանուչարյան:

Բելառուս-Սերգեյ Վերեմկո, Իգոր Շիտով, Սերգեյ Սոսնովսկի, Դմիտրի Լենցեւիչ, Ալեքսանդր Յուրեւիչ, Սերգեյ Կիսլյակ, Յան Տիգորեւ, Տիմոֆեյ Կալաչեւ, Ալեքսանդր Գլեբ, Սերգեյ Կրիվեց, Սերգեյ Կոռնիլենկո:

Առաջին խաղակեսում ավելի ակտիվ էին բելառուս ֆուտբոլիստները, թեեւ գոլային լուրջ պահեր չհաջողվեց ստեղծել մեր դարպասին: Նրանք ագրեսիվ էին գործում առջեւի գծում, իսկ պաշտպանությունում բավական զգույշ էին, քանի որ բացակայում էր հիմնական դարպասապահ Ժեւնովը:

Հայաստանի հավաքականը փիչ թե շաս վտանգավոր պահ ստեղծեց 40-րդ րոպեին, երբ հարվածային դիրքում հայտնվեց Արտավազդ Քարամյանը: Սակայն նրա հարվածը թույլ էր եւ դարպասապահը որսաց գնդակը: Բելառուսներն էլ մի քանի անգամ ստանդարտ դրություններից սպառնացին Բերեզովսկու դարպասին, բայց մեր դարպասապահը վստահ խաղաց: Այդպես էլ առաջին խաղակեսում դարպասները մնացին անառիկ: Իսկ մրցակիցներից դեղին քարտերի արժանացան բելառուսների ավագ Կալաչեւն ու Աղվան Մկրտչյանը:

Երկրորդ խաղակեսում բելառուսները կարողացան առավելությունը վերածել գոլերի: 58-րդ րոպեին Սոսնովսկին մոտ տարածությունից գրավեց Բերեզովսկու պաշտպանած դարպասը: Մեկ րոպե անց փոխարինման մտած Սամվել Մելքոնյանի հարվածից հետո գնդակը հետ մղվեց ու վրա հասած Փաչաջյանը վերականգնեց հավասարակշռությունը: Խաղի ելքը վճռեցին Գլեբ եղբայրները: 74-րդ րոպեին Պյաչեսլավը 3-րդ գոլը խփեց: Այսպիսով, Հայաստանի հավաքականն ընթացիկ մրցաշրջանը սկսեց 1-3 հաշվով կրած պարտությամբ:

ՖՈՏՈԼՈՒՐ

Բրազիլացիներն ուժեղ գտնվեցին

Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցակիցներից մեկը՝ Իռլանդիայի ընտրանին ընկերական մրցախաղում ուժերը չափեց բրազիլացիների հետ: Հանդիպումն անցկացվեց Լոնդոնի «Էմիրայթս» մարզադաշտում:

Աշխարհի հնգակի չեմպիոն Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Կառլոս Դունգան կրկին անտեսել էր իտալական «Միլանի» հարձակվող Ռոնալդինյոյին, որի համար հայտնվել էր ճնշադատության թիրախի տակ: Թեեւ նախորդ տարվա համեմաս Ռոնալդինյոն զգալիորեն բարելավել է իր խաղամակարդակը, սակայն գլխավոր մարզչին չի բավարարում ֆուտբոլիստի անձնական փաբը:

Փոխարենը երկար ընդմիջումից հետո կրկին հավաքական էր հրավիրվել Ադրիանոն: Ավելի անսպասելի էր վերջին հինգ տարիների ընթացքում գերմանական «Վոլֆսբուրգի» հարձակվող Գրաֆիտեին հավաքական հրավիրելը:

Իռլանդիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ջովանի Տրապատոնին չէր կարող օգտվել իր երկու առաջատար պաշտպաններ Ռիչարդ Դանի եւ Ջոն Օ' Շիի ծառայություններից, ինչն իր ազդեցությունն ունեցավ հանդիպման ելքի վրա: Հարցականի տակ էր նաեւ Ռոբի Քինի մասնակցությունը, սակայն վերջին պահին դա հնարավոր եղավ:

Հաշիվը բացվեց առաջին խաղակեսի վերջին րոպեին: Փորձելով կանխել Ռոբինյոյի վտանգավոր փոխանցումը, էնդյուսը գնդակն ուղարկեց սեփական դարպասը: Ընդմիջումից հետո աչքի ընկավ Ռոբինյոն՝ խփելով 2-րդ գնդակը: Բրազիլացիները հաղթեցին 2-0 հաշվով:

«Գանձասարը» մարզվում էր Աշգաբադում

«Թուրմենբաշու գավաթի» խաղարկությանը մասնակցելուց հետո Կաղանի «Գանձասարը» մարզումները շարունակեց Աշգաբադում՝ ուժերը փորձարկելով ստուգողական երկու խաղում: Առաջինում կաղանցի ֆուտբոլիստները 2-0 հաշվով հաղթեցին «Աշգաբադին»: Գոլերի հեղինակներ դարձան Արմեն Տատինցյանն ու Տիգրան Գեւորգյանը: Հաջորդ խաղում «Գանձասարը» 0-1 հաշվով զիջեց Լիտվայի չեմպիոն «Էկրանասին»:

«Գանձասարն» արդեն վերադարձել է Հայաստան եւ տեղում նախապատրաստվում է նոր մրցաշրջանի մեկնարկին:

Կաղելոն թեկնածուներից մեկն է

ՌԴ ֆուտբոլային միության նախագահ Սերգեյ Ֆուրսենկոն Լոնդոնում «Չելսի»-«Մանչեսթր Սիթի» խաղից առաջ հանդիպել եւ զրուցել է Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելոյի հետ: Ֆուրսենկոն բարձր է գնահատել Կապելոյի աշխատանքը եւ առաջիկայում համագործակցության հույս է հայտնել: Իտալացի մասնագետը խուսափել է բանակցություն վարելուց՝ խորհուրդ տալով այդ հարցով դիմել իր գործակալին: Այսպիսով, Կապելոն դիտվում է որպես Գուս Հիդինգի հնարավոր հետնորդ:

«Համագործակցության գավաթի» մրցաշարն Անթալիայո՞ւմ

Թուրքիայի զբոսաշրջության խոշոր գործակալություններից մեկի ղեկավար Շամիլ Յաղչանը Ռուսաստանի ֆուտբոլային միությանն առաջարկել է «Համագործակցության գավաթի» խաղարկության նախնական փուլերի հանդիպումներն անցկացնել Անթալիայում, իսկ կիսաեզրափակիչն ու եզրափակիչը՝ Մոսկվայում: Դա էապես կմեծացնի հետաքրքրությունը մրցաշարի նկատմամբ: Հայտնի է, որ հունվարին, երբ սովորաբար անցկացվում է «Համագործակցության գավաթի» մրցաշարը, թիմերի մեծամասնությունը նախապատրաստական փուլի մարզումները կազմակերպում են Թուրքիայում: Այնպես որ նրանց համար հարմար կլինի մրցաշարի խաղերն անցկացնել Անթալիայում՝ միաժամանակ չխախտելով նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

Յաղչանն ընդգծել է, որ Անթալիայում երեք մարզադաշտ կա նախատեսված 15 հազար, 3 հազար եւ 2 հազար հանդիսականների համար: Բացի այդ, կան ֆուտբոլի խաղադաշտեր, որոնցում եւս հնարավոր է խաղերի անցկացումը: Իսկ հարկ եղած դեպքում կարելի է նաեւ վարձակալել Անթալիայի գլխավոր մարզադաշտը: Ըստ Յաղչանի, ներկայումս Անթալիայում նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների բազմաթիվ բնակիչներ են բնակվում, ուստի նրանք մեծ հետաքրքրությամբ կհետեւեն մրցաշարի հանդիպումներին:

Հաջող ելույթներ Վրաստանում

Վրաստանում անցկացված ձյուդոյի միջազգային մրցաշարում հաջող ելույթներ ունեցան Հայաստանի երիտասարդ ձյուդոյիստները: Պատանիների մրցաշարում հաղթող ճանաչվեցին Հովհաննես Ալեքսանյանը (50 կգ), Արտավազդ Հովսեփյանը (66 կգ) եւ Սեյրան Սահակյանը (81 կգ): Եվս չորս ձյուդոյիստներ զբաղեցրին մրցանակային 2-րդ եւ 3-րդ տեղերը:

Երիտասարդների պայքարում 55 կգ քաշային Հրանտ Գրիգորյանը հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ զիջեց մրցակցին եւ դարձավ 2-րդ մրցանակակիր: Գոռ Հարությունյանը գրավեց 3-րդ տեղը:

Ամերիկացի սնոուբորդիստները Հայաստանում

Երեկ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում տեղի ունեցավ հանդիպում ԱՄՆ-ից հրավիրված սնոուբորդի երկու պրոֆեսիոնալ վարպետների հետ: Միջոցառմանը ներկա էին ՀԱՕԿ-ի առաջին փոխնախագահ Ռազմիկ Ստեփանյանը, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Սամվել Խաչատրյանը, անվանի մարզուհիներ, ձմեռային մարզաձեւերի պատասխանատուներ:

ՀԱՕԿ-ի փոխնախագահ Ռ. Ստեփանյանն իր խոսքում նշեց, որ ամերիկացի մարզուհիները Հայաստան են ժամանել ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի աջակցությամբ: Ամբեր Սթահաուզը եւ Էրին Քոմսթոքը սպորտի դեսպաններ են եւ նպատակ ունեն մարզաձեւը ներկայացնել Հայաստանում ու այն տարածել հատկապես կանանց շրջանում: Ընդհանրապես այցը կրում է «Կանայք եւ սպորտը» նշանաբանը, հանձի այն կանանց դերը սպորտում բարձրացնելու նպատակ է հետապնդում:

Հյուրերը մանրամասներ ներկայացրին մարզաձեւի, իրենց անցած մարզական ուղու եւ այս այցելության առաքելության մասին: Սնոուբորդիստներ Ամբեր Սթահաուզը եւ Էրին Քոմսթոքը Երեւանում կհանդիպեն ուսումնական տարբեր հաստատությունների սովորողների հետ, կցուցադրեն համապատասխան ֆիլմեր, Ծաղկաձորում կանցկացնեն մարզումներ, կունենան ցուցադրական ելույթներ եւ տեղացիների հետ կմասնակցեն բաց մրցաշարի:

Այցի կայացմանը աջակցել է ՀՀում ԱՄՆ դեսպանատունը: Այն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության «Սպորտի դեսպաններ» ծրագրի շրջանակներում: Մարտի 1-7-ն անցկացվող գործընթացին մեծապես նպաստել են ՀԱՕԿ-ը եւ սնոուբորդի հայկական ֆեդերացիան:

Հայ բռնցքամարտիկների հարուստ ավարը

ՖՈՏՈԼՈՒՐ

Հայաստանի պատանի բռնցքամարտիկները մեդալների հարուստ ավարով վերադարձան Քութայիսում անցկացված միջազգային մրցաշարից: Տարիքային երկու խմբով անցկացված մրցաշարում Հայաստանի հավաքականի կազմում ռինգ էին դուրս եկել 22 բռնցքամարտիկներ մարզիչ Հարություն Թովմասյանի գլխավորությամբ:

Կրտսեր տարիքային խմբում իրենց մրցակիցներին հաղթեցին եւ պատվո պատվանդանի առաջին աստիճանին կանգնեցին Էրիկ Պետրոսյանը (44 կգ), Կամո Հովհաննիսյանը (40 կգ), Էդիկ Գրիգորյանը (50 կգ) եւ Սարո Չոբանյանը (54 կգ): Ընդ որում վերջինս եզրափակիչում մրցեց իր հայրենակից, սեւանցի Արսյոմ Նաջարյանի հետ: Իրենց ընկերներից հետ չմնացին նաեւ Նարեկ Մանասյանն (56 կգ) ու Արթուր Ավդալյանը (72 կգ), որոնք եւս ուժեղագույնը ճանաչվեցին քաշային իրենց կարգերում:

Ավագ տարիքային խմբում էլ իրենց լավագույնս դրսեւորեցին Մանուկ Դիլանյանը (48 կգ), Հունան Մկրտչյանը (75 կգ) եւ Տիգրան Մանուկյանը (46 կգ)՝ ճանաչվելով մրցաշարի հաղթող: Ընդ որում Տիգրանը եզրափակիչում պարտության մատնեց Խորեն Զաքարյանին:

Քութայիսում անցկացված բռնցքամարտի մրցաշարը մեր բռնցքամարտիկների համար ուժերի լավ ստուգատես էր հունիսին եւ հուլիսին կայանալիք Եվրոպայի պատանեկան եւ երիտասարդական առաջնություններից առաջ:

«Ուլիսը» ջախջախեց մրցակցին

Ֆուտբոլի հանրապետության առաջնության բրոնզե մրցանակակիր «Ուլիսն» Ուռեկիում ստուգողական 3-րդ հանդիպումն անցկացրեց: Սեւադա Արզումանյանի սաները 4-1 հաշվով կամային հաղթանակ տոնեցին Զուգդիդիի «Բայա» թիմի նկատմամբ: Վերջինս Վրաստանի առաջնությունում ընթանում է 7-րդ տեղում:

Այդ խաղում առաջինը հաջողության հասան վրացիները: Մինչեւ ընդմիջում Դավիթ Գրիգորյանը վերականգնեց հավասարակշռությունը: 2-րդ խաղակեսում Արտակ Գրիգորյանը, Գեորգի Կրասովսկին ու Արա Հակոբյանը 3 անգամ գրավեցին մրցակցի դարպասը: Նշենք, որ ներկայումս «Բայայում» է հանդես գալիս նախկին ուլիսցի Լեւան Ակոբիան: Հաջորդ հանդիպումն «Ուլիսը» կանցկացնի այսօր Թբիլիսիի «Դինամոյի» հետ:

Հայ սուպերամարտիկը 3-րդ մրցանակակիր

Իրանի Յազդ քաղաքում անցկացված երիտասարդ սուպերամարտիկների աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլում մեր թիմից հաջող ելույթներ ունեցավ միայն գյումրեցի ճկասուպերակիր Արմենակ Գասպարյանը: Նախնական փուլում հաղթելով մրցակիցներին, նա մտավ եզրափակիչ փուլ, որտեղ գրավեց մրցանակային 3-րդ տեղը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 05/03/2010 22:42 Page 1

Օրվա հետքերով

Գագիկ Մինասյան. «Եթե Թուրքիան չգնա վավերացման, ցեղասպանության ճանաչման նոր ալիք կսանա»

1-ին էջից

Սա ամենահիմնական ճանապարհն է, բայց միակը չէ. օրինակ՝ կան տնտեսվարողներ (այսօր մամուլից իմացա «Սթար» սուպերմարկետների ցանցի նախաձեռնության մասին), ովքեր պարտավորվելու են քայլեր անել, որ թանկացումները նվազագույն անդրադարձներ ունենան լայն սպառման ապրանքների գների վրա, սա պետք է վարակիչ լինի այլ տնտեսվարողների համար, իսկ կառավարությունը պետք է ընտրի թիրախային խմբերը՝ ողջ օգնությունն ուղարկելով անապահով խավին:

- Ձեզ վախենում, որ սպասումային թանկացումներ, գների վերուվարումներ կլինեն, որոնք խուճապային տրամադրություններ կառաջացնեն:

- Կիկոսի մահը. պետք չէ այդ խուճապային տրամադրությունը սերմանել հատկապես մամուլի միջոցով, մենք ունենք տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով, որն արձագանքում է գներին:

- Հետեւեցի՞ք Տեր-Պետրոսյանի ելույթի տնտեսական հատվածին:

- Նրա մոտ տնտեսական մասն ամենաթույլն է եղել, քաղաքականում էլ չի փայլում, բայց հատկապես տնտեսականը... Ես չեմ նախանձում այն քաղաքական գործչին, որի հույսը այն քաղաքական լարվածություններն են, որոնք բխում են սոցիալական իրավիճակից, չի լինի այդպիսի բան, հերթական անգամ կոտրած տաշտակի առաջ է կանգնելու:

- Հայ-թուրքական հարաբերությունները այս պահին դանդաղեցված կադր են հիշեցնում, եւ թուրքերն էլ շարունակում են ուղղակի-անուղղակի ուղերձներ հղել մեզ ու աշխարհին, թնկթնկալ. գործընթացը կա՞նգ է առնում:

- Ես կարծում եմ, որ գործընթացն իր բնականոն հունի մեջ է, եւ որքան մոտենում է ապրիլի 24-ը, այնքան երկուսներ զինանոցի բոլոր միջոցներն օգտագործվում են, որովհետեւ ակնհայտ է, որ թուրքական կողմի համար ծայրահեղ աննպատակահարմար պետք է լինի Միացյալ Նահանգների կողմից ապրիլի 24-ի նախաշեմին ցեղասպանության վերաբերյալ հայտարարության ընդունումը, կամ Օբամայի ուղերձում «Ցեղասպանություն» տերմինի օգտագործումը: Չի բացառվում նաեւ Սենատում օրինագծի ընդունումը. այնպես որ թուրքական կողմի ողջ զինանոցի օգտագործումը դրան դիմակայելու համար բնական է: Ի հակադրություն դրա՝ նաեւ կա այն օբյեկտիվ իրավիճակը, որը նախանշվել էր հենց հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման ամենասկզբից, ու դրան տեղյակ եւ աջակցող է եղել ԱՄՆ-ն մասնավորապես՝ գործընթացը ողջամիտ ժամկետում ավարտելուն ուղղված: Բայց թուրքական կողմի պահվածքը հույս չի տալիս մտածելու, որ թուրքերն իրականացնում են իրենց պարտավորությունները՝ ողջամիտ ժամկետում այդ գործընթացն ավարտելու: Այդ տեսակետից նրանք ըստ էության դժում են իրենց խոսքը, որ տրված է եղել ոչ միայն հայկական կողմին, այլեւ Միացյալ Նահանգներին: Ես ակնկալում եմ, որ այդ դժման դիմաց Միացյալ Նահանգները պետք է անի հսկայական քայլեր՝ իր հեղինակությունը պաշտպանելու համար: Առաջին հերթին ես կարծում եմ, որ այսօր արտաքին հարաբերությունների հանձնաժողովը կքվեարկի 252-րդ բանաձեւի օգտին:

- Այդ դեպքում առավել վստահ կարելի կլինի ասել, որ թուրքերը չեն վավերացնի արձանագրությունները:

- Շատ կարեւոր է հասկանալ թուրքական դիվանագիտության նպատակը. նրանք պետք է կանգնեն այն իրողության առաջ, որ եթե չի վավերացնում, ապա ձեռք է բերում մի կերպար, որը հաջողություն չունի նայելու իր պատմությանը: Այդ դեպքում միջազգային հեղինակավոր պետությունների քաղաքական ուժերը պետք է փոխեն իրենց վերաբերմունքն այդ պետության նկատմամբ (հատկապես հայ-թուրքական մերձեցման ակնկալներում կանգնած ԱՄՆ-ն, Ռուսաստանն ու Եվրոմիությունը): Դրա դրսեւորումները կարող են տարբեր լինել:

Եթե Թուրքիան չգնա վավերացման՝ կսանա ցեղասպանության ճանաչման մի նոր ալիք: Մենք հիմա մեզ պետք է պահենք կանխատեսելի եւ վստահելի գործընկեր որպես, մենք մեր խոսքումները երբեք չպետք է դրժենք՝ այսպես եղել է մեր արտաքին քաղաքականությունը եւ այդպես էլ կլինի: Իսկ ընդհանրապես՝ Հայաստանի նախագահի արտաքին նախաձեռնողական քաղաքականությունն իր դրական հետեւանքները տվել է՝ Հայաստանի իմիջը բարձրացել է միջազգային կառույցներում, սա չի կարող չգրավել աշխարհի ուժային կենտրոնների ուշադրությունը:

- Ղարաբաղյան հարցը մտե՞լ է լուծման փուլ, նորացված առաջարկներին ինչպե՞ս ենք պատասխանելու:

- Ես կարծում եմ՝ ղարաբաղյան բանակցային գործընթացում իրավիճակն այնպիսին է, ինչպիսին եղել է վերջին մի քանի տարիների ընթացքում. ղարաբաղյան կարգավորման գործընթացն արագ լուծումների հնարավորության հույս չի թողնում, եւ դրա հիմնական պատճառը Ադրբեջանի իշխանությունների դեստրուկտիվ պահվածքն է. մի երկիր, որը ղեկավարվում է սուլթանական սկզբունքներով, որի ղեկավարն ամեն օր սպառնալիքներ է եղծում իր հարեւան պետությանը, նրանից ակնկալել արագ, փոխզիջումային լուծում անհնար է: Եվ ամենակարեւորը՝ այդպիսի պահվածքն անտանելի է ոչ միայն Հայաստանի համար, այլեւ բոլոր միջազգային կառույցների, հեղինակավոր երկրների համար, եւ այս պահվածքը հույս չի ներշնչում արագ կարգավորման:

- Այնուամենայնիվ՝ մեր երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին վերադառնանք:

- Այս տարվա ընթացքում մեր տնտեսությունը կկարողանա վերականգնել իր պոտենցիալը, որ ունեցել ենք նախաճգնաժամային տարիներին, մասնավորապես 2008-ին, իսկ ինչ վերաբերում է հարկային հավաքմանը, ապա այն օրենսդրական նախաձեռնությունների շնորհիվ, որ մենք ունեցանք անցյալ տարվա վերջին, այս տարվա բարձր վարչարարության արդյունքում մենք կունենանք սվերի էական կրճատում: Հարկեր-ՀՆԱ հարաբերակցության բարձր ցուցանիշ ենք նախատեսել այս տարի՝ 17, 7 տոկոս, սա ավելի բարձր է բոլոր տարիներին նախատեսված ցուցանիշից: Եթե հասնենք դրան, էապես կկրճատենք սվերը եւ կնպաստենք անապահով խավերի վիճակի բարելավմանը:

- Ձեր կարծիքով սվերը որքա՞ն է:

- Ես այդպիսի գնահատականներ չունեմ՝ հետեւում եմ փորձագիտական գնահատականներին եւ, կարծում եմ, այդ թիվը տատանվում է 30-40 տոկոսի սահմաններում:

Հարցազրույցը վարեց
ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Ադրբեջանն էլ է վախենո՞ւմ «Վերին Լարսից»

Ռուս-վրացական սահմանի ցամաքային եւ Վրաստանի համար ընդունելի միակ Վերին Լարսի հսկիչ-անցագրային կետի բացումը կարծես ավելի շուտ ոչ թե սովորական մի իրողություն է, այլ սարսափի ու վախի «սնդուկի» բացում:

Որ ճանապարհն իսկապես անվտանգներից չէ, գիտեն բոլոր նրանք, ովքեր երբեւէ անցել են այս ուղիով: Կովկասյան լեռները հատող այս ճանապարհը ձմռանն իսկական մի փորձություն է մեքենաների ու վարորդների համար, իսկ տաք եղանակին ռելիեֆային պայմանները կարող են սարսափեցնել ուզածդ ուղեւորի, եթե գեթ անգամ պատկերացնի, թե ինչ անդունդների եզրով է գնում ռազմավիրական այդ ճանապարհը:

Ինչեւէ, խոսքը բնավ էլ այն սարսափների մասին չէ, որ կարող են ծնվել նորմալ մարդկանց մեջ Վերին Լարսը հաստելուց հետո Կովկասյան լեռներով անցնելիս: Խոսքն այն մտահոգությունների ու մտավախությունների մասին է, որ չգիտես ինչ հիմքերով բարձրաձայնում են Հայաստանի հարեւանները:

«**Ազգն**» արդեն ներկայացրել է այն վախերն ու մտահոգությունները, որ արտահայտում են վրացական տարբեր ուժեր ու կառույցներ՝ Վերին Լարսի անցակետի բացմամբ տեսնելով Ռուսաստանի հնարավոր «հարձակումը» Վրաստանի վրա: Հասկանալի է, որ բացի այդ, հնարավոր բոլոր մխրճանենգ բեռնափոխադրումների առումով եւս Վերին Լարսից վրացական իշխանություններն ու անգամ ընդդիմադիր որոշ ուժեր սպառնալիք են տեսնում, սակայն սա գոնե քիչ թե շատ տրամաբանված է այն դեպքում, երբ որեւէ հարձակման դեպքում փակ կամ բաց անցակետերը ոչինչ չեն կարող որոշել:

Պարզվում է, սակայն, Լարսը սարսափի բաժին է հանել նաեւ Ադրբեջանի համար: Ադրբեջանցիներն էլ վախի իրենց «հիմնավորումն» ունեն: «Եթե Ադրբեջանը ինչ-որ տեղեկություն ունենա Հայաստան ռուսական զենքի մատակարարման մասին, ապա կարձագանքի՝ բանակցելով վրացական կողմի հետ», հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարար **Էլմար Մամեդյարովը**:

Տվյալ պարագայում խնդիրն այն է, որ Ադրբեջանը Հայաստանից ու Ռուսաստանից անցել, արդեն անվստահություն է դրսեւորում նաեւ Վրաստանի հանդեպ: Մյուս կողմից, տարօրինակ է Ադրբեջանի արտգործնախարարի այս «մտավախությունը», երբ Ադրբեջանը կոկորդ պատռելով ուզում է Ադրբեջանի բնակչությանը, աշխարհին, ու հատկապես Հայաստանին հավատացնել, թե հզոր է, ուժեղ ու պատրաստ «զենքով վերադարձնելու օկուպացված տարածքները», թեեւ գործնականում ստացվում է, որ ինքն իր գոռոցին չի հավատում:

Այլապես ինչո՞ւ է Էլմար Մամեդյարովը այսօրինակ մտահոգություն հայտնում, այն էլ Իսպանիայի արտգործնախարարի հետ համատեղ ասուլիսում: Հասկանալի է, որ ռուսական զենքի տեղաշարժերին ողջ աշխարհն է հետեւում, մեկը վախից, մյուսը՝ տեղեկացված լինելու մտադրությունից դրդված, բայց դա բնավ էլ չի նշանակում, թե հենց այդպես, ոտքի վրա կարելի է նման հայտարարություններ անել:

Ամեն դեպքում, մեկ բան ակնհայտ է, Ադրբեջանն ինքն իր «հզորության» մասին հայտարարություններին չի հավատում, վստահ չէ նավթային միլիոնների կերտած «հզոր բանակին» ու դրա «մարտունակությանը»: Ու դեռ այս երկրի նախագահը հավակնում է սեփական բնակչությանը հավատացնել, թե ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուժային լուծումն այլընտրանք է:

Ադրբեջանի ԱԳ նախարարի խոսքերը, թե Հայաստանին զենք մատակարարելու մասին որեւէ տեղեկության դեպքում Ադրբեջանը կարձագանքի, նաեւ հարմար նախերգանք են. այդօրինակ տեղեկություններ կարող են տարածել նման հարցերում փորձ ունեցող ադրբեջանական գործակալությունները կամ դրանց նման այլ քարոզչամիջոցները, իսկ հետո Ադրբեջանը պիտի վրացիների հետ բանակցի ու արձագանքի՞:

Վերին Լարսի անցակետը, տարօրինակորեն, Վրաստանի ու Ադրբեջանի համար փակ ավելի հարմար էր: Իսկ բաց լինելով մի տեսակ մնացել է մեր հարեւանների կոկորդում:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիկոլի գործը Վերաքննիչ դատարանում կշարունակվի այսօր

Այսօր Վերաքննիչ դատարանում կշարունակվի «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի փաստաբաններ Լուսինե Սահակյանի եւ Երվանդ Վարոսյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի քննությունը: Երեկ մեղադրող կողմը՝ Հարություն Հարությունյանը, դատարանին ներկայացրեց իր վերաքննիչ բողոքը՝ պահանջելով բեկանել Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մնացական Մարտիրոսյանի՝ հունվարի 19-ին կայացրած վճիռը, եւ Փաշինյանին մեղավոր ճանաչել նաեւ 316 հոդվածի 1-ին մասով՝ բռնություն իշխանության ներկայացուցչի նկատմամբ, որով Փաշինյանն արդարացվել էր: Դատական նիստի ժամանակ Լուսինե Սահակյանն ու Երվանդ Վարոսյանը ներկայացրին իրենց առարկությունները՝ մեղադրող կողմի պահանջը բնութագրելով անհեթեթություն: Մեղադրող կողմի պահանջները անհեթեթություն անվանեց նաեւ Նիկոլ Փաշինյանը:

Մեղադրող կողմի բողոքը քննարկելուց հետո պաշտպանների միջնորդությամբ դատավոր Սերժիկ Ավետիսյանը հետաձգեց նիստը:

Հիշեցնենք, որ Փաշինյանը դատապարտվել էր 7 տարվա ազատազրկման 2008 թ. մարտի 1-ին զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեղադրանքով: Պաշտպանական կողմը Վերաքննիչ դատարանից պահանջում է արդարացնել Փաշինյանին եւ ազատ արձակել:

Հ. Հ.

Ուժը կորցրած է ճանաչվել «ՎԱՀԱՆ ՓՈՔՐ» ՍՊԸ գրավատան լիցենզիան

Մարտի 2-ին ԿԲ խորհրդի որոշմամբ ուժը կորցրած (դադարեցված) է ճանաչվել «ՎԱՀԱՆ ՓՈՔՐ» ՍՊԸ «ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Երեւանյան 8» հասցեում գտնվող գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե178 լիցենզիայի գործողությունը՝ գրավատան կազմակերպչի դիմումի համաձայն:

Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից գրավատունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտականությունների կատարման հետ:

«ՎԱՀԱՆ ՓՈՔՐ» ՍՊԸ եւ ֆիզիկական անձանց միջեւ կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերը կարող են սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից կողմերի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին մասի, վարկառուների կողմից վերցված վարկը եւ մինչեւ պայմանագրի լուծման պահը դրա դիմաց սահմանված տոկոսները եւ գումարի օգտագործման հետ կապված այլ վճարները մարելուց, պահատվության պայմանագրի դիմաց վճարումները կատարելուց, ներառյալ՝ գույքի պահատվության հետ կապված գրավատան կրած սովորական եւ արտակարգ ծախսերը հատուցելուց եւ գրավատան կողմից որպես գրավ կամ ի պահ ընդունված գույքը վերադարձնելուց հետո:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Ռիելթոր Ֆլորես Աճուրդի Տուն ՍՊԸ-ն իրականացնելու է Զարգացման Հայկական Բանկ ԲԲԸ-ի կողմից օտարման ներկայացված սորեւ նշված գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակելի տուն: Հասցե՝ ք. Երեւան, Էրեբունի համայնք, Վարդաշեն փ., թիվ 17 (ընդ. մակերեսը՝ 165.8 ք.մ., հողամասը՝ 0.035 հա եւ գոմը՝ 24.3 ք.մ.): Մեկնարկային գինը՝ 19800000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական եւ հոլանդական (գնի նվազեցում) եղանակով 05.04.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. որ ժ.13.00-ից Ադամանդ ԵԱՀ Բորսայի հարթակում՝ ք. Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 56-52-28, 56-31-15 կամ այցելել **www.borsa.am** կայք:

Վաճառվում է

տարածք Օդերայի հարեւանությամբ: Սայաթ-Նովա 3, 1 հարկ, 1 գիծ, 125 քմ, 4.5 մ բարձ: Ունի 3 մուտք՝ 2-ը փողոցից, նաեւ նկուղ՝ 25 քմ: Հարմար է խանութի, օֆիսի, ռեստորանի, արձարանի եւ այլնի համար: Գինը պայմանագրային: Կարող է վաճառվել մասնակի՝ 62քմ:

Հեռ.՝ **094-366-989, 055-09-64-61:**

ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱՆՎՃԱՐ ԳԻՆԸ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 3.03.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: